ԱԲՐԱՀԱՄԻՆ ԹՈՒՄԱՆԵԱՆ

2614

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԼԵԶՎԻ

ՀԱՄԱՌՕՏ

ՈՏՈՐԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՈՐՈՇ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐՈՎ ԵՒ ՀՈՐԻՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ

Սարքի եւ միջին դպրոցների համար

5-րդ տպագրութիւն

Совѣтомъ Попечителя допущена въ качествѣ учебника для низшихъ и среднихъ учебныхъ заведеній Кавк. Уч. Окр. (Журн. пост. отъ 26 февр. 1911 г.; отнош. № 5452).

491.99-5
Թ-94

ԹԻՖԼԻՍ

Տպարան. տպարան Ա. Ա. Ներսեսեանի Գարեգինեան փող. № 1
1915

2010

136

ՑԵՐՈՒԹԻՆ ԹՈՒՄԱՆԵԱՆ

991.99-5
Թ-94

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԼԵԶՎԻ

ՀԱՄԱՌՕՏ

ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՈՒՂՂԱԳԻՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐՈՎ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ

Սորին եւ միջին դպրոցների համար

Ե-րդ տպագրութիւն

ГОС. П. БИБ-КА АРМ. ОБМЕННЫЙ ФОНД

Совѣтомъ Попечителя допущена въ качествѣ учебника для низшихъ и среднихъ учебныхъ заведеній Кавк. Уч. Окр. (Журн. пост. отъ 26 февр. 1911 г.; отнош. № 5452).

ԹԻՖԼԻՍ
Էլեքտր. տպարան Ա.Մ. Կերեսելիձէի Դարբայեան փող. № 1.
1915

43672-Ա.Հ.

25925-62 [2001

ԱՌԱՋԱԲԱՆ

Դասագիրքս լոյս է ընծայւում հինգերորդ հրատարակութեամբ, որը գրեթէ անփոփոխ արտատպութիւն է չորրորդից։ Նախորդ հրատարակութիւնները բարեփոխելիս՝ իր ժամանակին նկատի են առնւած այն ցուցմունքները, որ արել էր պրոֆեսսոր Ն. Մառը՝ Կովկասի Ուսումնարանական Շրջանի պ. Հոգաբարձուի յանձնարարութեամբ։ Այդ բարեփոխութիւնից յետոյ՝ աշխատութիւնս Կովկասի Ուսումնարանական Շրջանի Հոգաբարձական Խորհրդի կողմից (27-ն փետրուարի 1911 թ., № 5452) թոյլատրւած է, որպէս դասագիրք ոտորին և միջին դպրոցների համար։

Քերականական դասընթացն աւելի գործնական դարձնելու համար՝ դասագրքիս մէջ զետեղւած են զանազան վարժութիւններ, որոնց շնորհիւ աշակերտը հիմնաւորապէս իւրացնում է այս կամ այն կանոնը կամ լեզւական առանձնայատկութիւնը։ Սակայն այդ վարժութիւնները զետեղւած են գլխաւորապէս որպէս նմուշ դասատուների համար։ Ցանկալի և աւելի օգտակար է. որ այդ տեսակ վարժութիւններն ամեն անգամ կազմեն աշակերտների նոր դասից՝ ուսած յօդւածից կամ ոտանաւորից։ Թէ հնչիւնաբանական բաժնում և թէ իւրաքանչիւր բանի մասից յետոյ՝ առանձին տեղ է տրւած ուղղագրութեան։ Առանձնապէս ուշադրութիւն է դարձրւած այն դէպքերի վրա, որոնք յաճախ սխալ են պատճառում։ Ուղղագրական ընդհանուր դիտելիքների հետ միասին՝ ի միջի այլոց բացատրւած են ե, է, ո, օ, ը, յ, ւ, վ, դ, խ, ռ, ր և այլ տառերի գործածութեան կանոնները, և բերւած են այն յաճախ գործ ածւող արմատական բառերը, որոնք գրւում են է-ով, օ-ով և յ-ով։

Բայի դրանից գրքիս վերջում կայ մի յաւելված, որտեղ խօսւում է նախադասութիւնների տեսակների մասին։ Իսկ նախադասութիւնների մանրամասն ուսումնասիրութիւնը և նրանց կապակցութիւնները զետեղւած են իմ «Համաձայնութեան» մէջ։

Որովհետև դասագիրքս որոշւած է պետական և հայոց դպրոցների համար, որտեղ միաժամանակ անցնում են թէ հայերէն և թէ ռուսերէն քերականութիւն, այդ պատճառով էլ, աւելի դիւրութիւն տալու համար՝ իւրաքանչիւր քերականական հայերէն տերմինից յետոյ փակագծում դրւած է նրա ռուսերէն թարգմանութիւնը։

Թիֆլիսի II իգական եւ IV արական
գիմնազիաների դասատու՝

Յարութիւն Թումանեան

ՀՆՉԻՒՆՆԵՐ ԵՒ ՏԱՌԵՐ

§ 1. Ամեն մի խօսք բաղկացած է առանձին հնչիւններից. օրինակ՝ *ծառ* խօսքի մէջ *ծ, ա, ռ* հնչիւններ են (звуки)։

Հնչիւնների նշանագրերը կոչւում են *տառ* կամ *գիր* (буква)։ Հնչիւններն արտասանւում են, իսկ տառերը՝ գրւում կամ տպւում. հնչիւնները լսւում են, իսկ տառերը՝ տեսնւում ու կարդացւում։

Հայոց լեզուն ունի 38 տառ՝ ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ, ժ, ի, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, ո, չ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ր, ց, ւ, փ, ք, օ, ֆ։

Բոլոր տառերի այս դասաւորութիւնը կոչւում է *այբբեն* (азбука)։

§ 2. Հնչիւնները բաժանւում են երեք կարգի.

1) *Ձայնաւորներ* (гласные)՝ ա, ե, է, ը, ի, ո, օ, ու։

2) *Բաղաձայններ* (согласные)՝ բ, գ, դ, զ, թ, ժ, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, չ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ր, ց, ւ, փ, ք, ֆ։

3) *Երկբարբառներ* (двугласные)՝ եա, եօ, իւ (ю), այ, ոյ (уй, ой)։

Ձայնաւորներն արտասանւում են բաց բերանով (ձայնով) և կարող են գործ ածւել մենակ։

Բաղաձայններն արտասանուում են բերանի զանազան մասերն իրար մօտեցնելով և գործ են ածուում միայն ձայնաւորների հետ միասին։ Իսկ երկբարբառները կազմուում են երկու հնչիւնների միաւորութիւնից։

Յ տառը երբեմն հնչուում է, ինչպէս կիսաձայն ի (й), երբեմն՝ ինչպէս հ, իսկ երբեմն էլ անձայն է մնում (§ 12, ա, բ, ե)։

Ի՝ գրելով Ն-ից յետոյ՝ կազմում է ու=և։

§ 3. Մեր այբբենի տառերը, բացի հնչիւնական նշանակութիւնից, ունեն նաև թւական նշանակութիւն. այսպէս, օրինակ՝ ա=1, բ=2, գ=3, դ=4, ե=5, զ=6, է=7, ը=8, թ=9, ժ=10, ժա=11, ժբ=12, ժգ=13, ի=20, իա=21, իբ=22, իե=25, իթ=29, լ=30, խ=40, ծ=50, կ=60, հ=70, ձ=80, ղ=90, ճ=100, ճծա=151, մ=200, ն=1000 և այլն։

Վարժութիւն։—1. Արտագրեցէք հետևեալ ոտանաւորը, ձայնաւոր տառերի տակ քաշեցէք մի գիծ, իսկ երկբարբառների տակ՝ երկու գիծ.

Ծիծեռնակը բոյն էր շինում,
Եւ շինում էր, և երգում.
Ամեն մի շիւղ կպցնելիս՝
Առաջուան բոյնն էր յիշում։
Այժմ նորից բոյն էր շինում,
Եւ շինում էր, և երգում.
Նա յիշում էր անցած տարին
Իր սընուցած ձագերին,
Որոնց ճանպին յափշտակեց
Արիւնարբու թշնամին։ Ղազ. Ադ.

2։ Հայոց տառերով գրեցէք հետևեալը.

18, 23, 24, 28, 33, 35, 37, 39, 46, 49, 61, 73, 82, 94, 101, 102, 125, 138, 567, 789, 1915, 2043, 3000։

ՎԱՆԿ ԵՒ ԲԱՌ

§ 4. ա) Խօսքի այն մասը, որ միանգամից է արտասանուում, կոչուում է վանկ (слогъ)։ Վանկը կազմուում է մի կամ մի քանի հնչիւնից։ Առանց ձայնաւորի չի կարելի վանկ կազմել։—Սե-ղան, ա-շա-կերտ, ու-սում-նա-բան։

բ) Եթէ բառի սկզբում կան երկու կամ աւելի բաղաձայն տառեր, վանկելու ժամանակ առաջին բաղաձայնից յետոյ գրւում է ը ձայնաւորը։—Գը-լուխ, ժը-պիտ, թը-ռչուն, տրրտ-մել։

գ) Եթէ բառի վերջում կայ ն կամ ը, վանկելու ժամանակ այդ տառերը կից բաղաձայնի հետ առանձին վանկ են կազմում։—Բե-ռն, դու-ռն, մե-ղը, փո-քը, ծա-նը։

Վարժութիւն։—Վանկեցէք հետևեալ բառերը.

Քանոն, տետրակ, թանաք, գրիչ, սենեակ, պայուսակ, թշնամի, կրկնութիւն, գրչահատ, առաւօտ, եկեղեցի, հիւրասիրել, ընտանիք, իմաստութիւն, օրիորդ, օրացոյց, աշակերտուհի, ովկիանոս, Մարիամ, դառն, խառն, մանր, կարծր, կայսր։

§ 5. Մէկ կամ աւելի վանկը, որ իր մէջ պարունակում է մի որևիցէ միտք կամ նշանակութիւն,

կոչւում է բառ (слово)։—Ձի, տուն, սեղան, մատիտ, թանաքաման։

Վանկերի թիւին նայելով՝ բառը լինում է.

1) Միավանկ (односложное)՝ ծառ, կով, ուլ, քար, մարդ։

2) Բազմավանկ (многосложное)՝ յա-տակ, պա-տու-հան, աշ-խա-տա-սի-րու-թիւն։

§ 6. Բառի այն մասը, որ անփոփոխ է մնում և պարունակում է իր մէջ նրա բուն նշանակութիւնը, կոչւում է արմատ (корень). օրինակ՝ խոս-ել, ան-խոս, խոս-ք, խոս-ելիք բառերի մէջ խոս արմատ է։

Բառի այն մասը, որ դրւած է արմատից յետոյ, կոչւում է վերջաւորութիւն (окончаніе). օրինակ՝ խոս-ել, խոս-ելիք բառերի մէջ ել, ելիք վերջաւորութիւններ են։

Իսկ բառի այն մասը, որ դրւած է արմատից առաջ կոչւում է նախածանց (приставка). օրինակ՝ ան-խոս բառի մէջ ան նախածանց է։

Արմատական բառը կոչւում է նախատիպ (первообразное)։ Իսկ եթէ նախատիպ բառը սկզբից կամ վերջից մասնիկներ է ընդունում, կոչւում է ածանցեալ (производное). օրինակ՝ հայր նախատիպ բառ է, իսկ անհայր, հայրական, հայրաբար, հայրենիք՝ ածանցեալ։

Վարժութիւն։—Հետևեալ նախատիպ բառերից կազմեցէք ածանցեալ բառեր։

Գիր, ջուր, տուն, դաշտ, մարդ, որդի, մայր, քաջ, սէր, հոգի։

§ 7. Բառը կազմութիւնով լինում է.

1) Պարզ (простое), որ միացած չէ ուրիշ բառի հետ։—Սեղան, տուն։

2) Բարդ (сложное), որ երկու կամ աւելի բառից է կազմւած։—Սեղանատուն, բաբեկամ, առուտուր։

Ինչպէս տեսնում ենք, բարդ բառերը կազմւում են ա, ե, ու յօդակապ տառերի օգնութեամբ։

Ծանօթ.—Այդ յօդակապներից ա և ե ձայնաւորները կազմում են նախընթաց բառերի բնի վերջին մասը, իսկ ու-ն շաղկապ է։

Մի քանի բարդ բառեր չ'ունեն յօդակապներ։—Հացթուխ, ջրկիր, ձեռնատու և այլն։

Վարժութիւն։—Կազմեցէք բարդ բառեր հետևեալ բառերից.

Գունդ—զօրք, տուն—ժամ, սիրտ—բարի, գիրք—վաճառել, մանել—լոյս, հանել—պատ, հիւր—սիրել, սէր—մարդ, աստիճան—բարձր, պետ—խումբ, թուք—մուր, կեր—խում։

ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՄԵԾԱՏԱՌ

§ 8. Ամեն մի տառ գրւում է կամ տպւում երկու ձևով *մեծատառ* (прописная) Ա, Բ, Գ... և *փոքրատառ* (строчная) ա, բ, գ...

Մեծատառով սկսւում են.

ա) Յատուկ անունները։ — Մարգարիտ, Լևոն, Եփրատ, Թիֆլիս, Մասիս։

բ) Ամեն նոր գրութեան առաջին բառը։—Ձմեռն էր։ Տատին շրջապատեցին թոռները և խնդրեցին, որ մի հեքիաթ ասի։ Նա սկսեց։ Ղ. Ադ.

գ) Ոտանաւորի ամեն մի տողի առաջին բառը։—

Սարի գլխին տխուր ժպտաց
Ղարաբաղի արևը,
Զրաբերդի անտառներին
Տրւաւ վերջին բարևը։ Յար. Թում.

Ծանօթ։—Ոտանաւորի տողերը սկսւում են նաև փոքր տառով։

դ) Քաղաքավարական գրութեան մէջ Դուք, Ձեր, Ձեզանից... բառերը, սրբազան անուններն ու տիտղոսները։—Արարիչ, Փրկիչ, Նորին Մեծութիւն, Վեհափառ Տէր։

ե) Գրւածքների և պարբերական թերթերի անունները։—«Կուաձաղիկ»ու «Հացի խնդիր» վէպերը գրել է Պերճ Պռոշեանը։ «Մշակը» լրագիր է։ «Աղբիւրն» ու «Հասկերը» մանկական ամսագրեր են։

Ե, Է

§ 9. Ե բառի սկզբում հնչւում է, ինչպէս կարճ ի (ես, երկու, եղբայր), իսկ բառի միջին՝ է (մեծ, գիշեր, ձեռներ)։

ա) Բառերի վերջում ե չի գործ ածւում, այլ գրւում է է։—Նունէ, Եւգինէ, գուցէ, միթէ, բոպէ, մարգարէ։

բ) Բառերի միջին մեծ մասամբ գրւում է ե, իսկ է քիչ է գործ ածւում։ Ուղղագրութեան համար պէտք է սովորել է-ով գրւող բառերը։

Է-ով գրւում են հետեւեալ յաճախ գործ ածւող բառերը.

Արդէն	Գոմէշ	Խէթ	Նէր	Վէր (վրայ)
Աղէտ	Դէզ	Խէժ	Շէկ	Վէրք
Աղէս	Դէմ	Ծէս	Շէն	Վրէժ
Անէծք	Դէմք	Կէս	Պատճէն	Տգէտ
Անօրէն	Դէս, դէն	Կէտ	Պատնէշ	Տէր
Ապաւէն	Դէպի	Հանդէս	Պատուէր	Տնօրէն
Առնէտ	Դէպք	Հէգ	Պարտէզ	Փէշ
Ասպարէզ	Դէտ	Հրաւէր	Պէս	Փոխարէն
Բզէզ	Երէց	Հրէշ	Զրվէժ	Քարտէզ
Բէհ	Զէնք	Զէթ	Սէր	Քէն
Դէթ	Թէկուզ	Մէգ	Վէճ	Օրէնք
Դէս	Թէպէտ	Մէկ	Վէպ	
Դէր	Ժապաւէն	Մէջ	Վէտ-վէտ	

գ) Է-ով գրւում են այն յատուկ անունները, որոնք վերջանում են էլ, էս, էն։—Միքայէլ, Իսրայէլ, Ռաֆայէլ, Յովհաննէս, Ներսէս, Խորէն, Ռուբէն, Գուրգէն, Կայէն, Սուրէն և այլն։

դ) Է-ով գրւում են այն բառերը, որոնք ունեն հետևեալ վերջաւորութիւնները.

ւէտ՝ հոտաւէտ, գինեւէտ, խոտաւէտ։

ըէն՝ հայերէն, ռուսերէն, համօրէն, փոխարէն։

ղէն՝ ոսկեղէն, մրգեղէն, հողեղէն։

պէս՝ այսպէս, այդպէս, այնպէս, վերջապէս։

էք՝ երեխէք, Զրօրհնէք, եկէք, գնացէք։

Ինչպէս տեսնում ենք, է գլխաւորապէս գրւում է բառերի վերջին վանկում։ Բայց կան բառեր, որոնց վերջին վանկում գրւում է ե։—Այստեղ, այնտեղ, ահեղ, զօրեղ, հանճարեղ, ասես, ուտես, տեսնես, խօսել, տանել, ծառեր, աշակերտներ և այլն։

ե) Բառերի միջին՝ ձայնաւորից առաջ սովորաբար գրւում է է։—Խօսէի, խօսէիր, խօսէինք, խօսէիք, խօսէին, մարգարէական, միջօրէական, բոպէական, քրիստոնէութիւն, Թադէոս, Մատթէոս, Գէորգ և այլն։

Վարժութիւն։—Արտագրեցէք՝ հետևեալ յօդուածը և խաչերի տեղ, ուր հարկաւոր է, դրէք ե կամ է։

Ֆկ֊ւ ֊ր գարունը։ Աշխ֊նն ու Արփատակ֊սը շատ ուրախ ֊ին։ Բոլոր ֊ր֊խ֊քը գնացին պարտ֊զը։ Տանը միայն մնաց Գայիան֊ն։ Նա դ֊ռ պիտի պատրաստ֊ր իր հայ֊ր֊ն դասը։ Ար֊գակը ժպտում֊ր վ֊րից ու հրաւ֊ր կարդում նրան. «Մ֊թթ բաւական չ֊, ինչքան պարապ֊ցիր. դուրս ֊կ, տ֊ս ինչպ֊ս ուրախ ֊ պարտիզում, տ֊ս ինչ հոտաւ֊էտ ծաղիկն֊ներ ու ինչ կանաչ֊գ֊ն֊ն֊ր կան»։—Ոչ, պայծառ ար֊ւիկ, մինչ֊ւ գործ֊րս չը վ֊րջացն֊մ, ֊ս չ֊մ կարող տ֊զից շարժւ֊լ։ Վերջապ֊ս Գայիան֊ն սովոր֊ց դասը, ֊լաւ ս֊նեակից ու դիմ֊ց դ֊պի պարտ֊զ։

Ո, Օ

§ 10. ա) Ո բառերի սկզբում կարդացւում է ւօ, ինչպէս՝ ոտ, որը, ոսկի, որդի։

Բացառութիւն են կազմում՝ ով, ովկիանոս, ովսաննա և այլն, ուր վ-ից առաջ ո հնչւում է օ։

բ) Բառերի միջին ո հնչւում է օ։—Նոր, ձոր, բոլոր, հողոտ։

գ) Բառերի վերջում ո մենակ չի մնում, այլ ընդունում է յ։—Յեռոյ, սիրոյ, երեկոյ, Աստուծոյ։

Բացառութիւն են կազմում այո և քո բառերը։

Բառերի վերջում օ սակաւ է գործ ածւում։—Տօ, օհօ, ծօ, Մկօ, Մարօ, Մարգօ, Խէչօ, Կարօ։

դ) Բառերի միջին մեծ մասամբ գրւում է ո, իսկ օ քիչ է գործ ածւում։ Ուղղագրութեան համար պէտք է սովորել օ-ով գրւող բառերը։

Օ-ով գրւող բառերից յաճախ գործ են ածւում սրանք.

Ակօս	Դրօշակ	Կարօտ	Մօտ	Ոսկեղօծ
Աղօթք	Եօթը	Կրօն	Մօր (մայր)	Պաշտօն
Աղօտ	Եղբօր	Կօշիկ	Մօրուք	Պօղոս
Ամօթ	Զբօսնել	Համառօտ	Յօդւած	Սօս, սօսի
Անօթ	Զօրք	Հետաղօտել	Յօժար	Վաղօրօք
Անօթի	Թօշնել	Հղօր	Յօնք	Վառօդ
Առաւօտ	Իրօք	Հօտ	Յօրանջել	Տօթ
Արդեօք	Խելօք	Հօտաղ	Յօրինել	Տօն
Արօտ	Խօսք	Հօր (հայր)	Նախօրօք	Ցօղ
Արօր	Ծանօթ	Զօն	Նարօտ	Օրօր
Բօթ	Ծղօտ	Ղօղանջել	Նօսր	
Գօտի	Ծնօտ	Ճօճ	Շօշափել	

Բառերի ածանցման ու բարդութեան ժամանակ օ մնում է անփոփոխ։—Աղօթք, աղօթել, աղօ-

թասէր։ Կրօն, անկրօն, Կրօնական, կրօնուսոյց, կրօնասէր։

Վարժութիւն։—Արտագրեցէք հետևեալ յօդուածը և խաչերի տեղ, ուր հարկաւոր է, դրէք ո կամ օ։

Մի Խր Խձը սԽղալԽվ եկաւ ՀասԽ անունԽվ գիւղացու մԽտ և նԽրա հետ սկսեց խԽսել. «Բարի դրացի, այսԽրւանից եկ ապրենք եղբԽր պէս. էլ ԽչԽ դու ինձանից և ԽչԽ ես քեզանից չը վախենանք։ ԽԽրիս փԽխել եմ, էլ ծուռ ճանապԽվ չեմ սԽղալու, ԽչԽ Խքի ինաս չեմ տալու»։—Թէպէտ նԽր է քԽ կաշին, ասաց ՀասԽն, բայց հԽգիդ առաջանն է։ Ասաց ու մէկ հարւածԽվ գլԽրից նԽրան։ ՅետԽ ապահԽվ սկսեց արԽրԽվ խԽր ակԽսներ ծրել հԽղի մէջ, վարել, ցանել, Խր վերջը ցԽրենԽվ լցնի իր հԽրը։

Ը

§ 11. ա) Ը ձայնաւորը բառի սկզբում և վերջում միշտ գրւում է։—Ընկեր, ծառը։

բ) Բառերի միջին բաղաձայնների մօտ, ուր լսւում է ը, սովորաբար չի գրւում. օրինակ՝ լսւում է զբրել, զբրկել, թըշնամի, մրթմրթալ, երկընքի, խորհրդի, բայց գրւում է՝ զրել, զրկել, թշնամի, մրթմրթալ, երկնքի, խորհրդի։

Բայց տողադարձի ժամանակ այդ բառերի մէջ ը ձայնաւորը գրւում է՝ (§ 4, բ)։—Գր-բել, զբր-կել, թըշ-նամի, մբրթ-մբրթալ և այլն։

գ) Բարդ բառերի միջին, երբ երկրորդ բաղադրիչ մասն սկսւում է ը-ով, գրւում է ը։—Հատընտիր, նորընծայ, դասընկեր, խոչընդոտ, ճակընդեղ։

դ) Բառերի սկզբում ստ, սպ, սկ, սք, սփ, սթ,

զգ, զբ, շտ կապակցութիւններից առաջ լսւում է կարճ ը, բայց չի գրւում։—Ստուգել, սպասել, սկսել, սքանչելի, սփոփել, սթափւել, զգոյշ, զբօսնել, շտապել։

Բացառութիւն են կազմում սփռել, շփոթ և այլն։

Ց

§ 12. ա) Ց բառի սկզբում կարդացւում է հ։—Ցատակ, յայտնի, յիսուն, յարմար։

Բառերի սկզբում յ համեմատաբար աւելի քիչ է գրւում, քան թէ հ։ Ուղղագրութեան համար պէտք է սովորել յ-ով սկսւող բառերը։

Ց-ով սկսւող բառերից յաճախ գործ են ածւում սրանք.

Ցակինթ	Ցաջորդ	Ցարութիւն	Ցղանալ	Ցորձանք
Ցաղթել	Ցառել	Ցաւելուած	Ցղկել	Ցունխ
Ցաճախ	Ցարեաւ	Ցաւէտ	Ցօրելեան	Ցուլիս
Ցամառ	Ցասմիկ	Ցաւիտեան	Ցոգնակի	Ցունաար
Ցայտնի	Ցատակ	Ցափշտակել	Ցոգնել	Ցուշարար
Ցանգ	Ցատուկ	Ցեղաշրջել	Ցուզել	Ցստակ
Ցանդիման	Ցարատաւ	Ցենել	Ցոյժ	Ցոդ,յօդուած
Ցանդուգն	Ցարգել	Ցետ (ետ)	Ցոյն	Ցոժար
Ցանկարծ	Ցարդ	Ցիմար	Ցոյս	Ցոնք
Ցանձնել	Ցարկ	Ցիշել	Ցոպոպ	Ցորանջել
Ցանցանք	Ցարձակւել	Ցիսուն	Ցորդ	Ցորինել
Ցաջող	Ցարմար	Ցիրաւի	Ցորդորել	

Բառերի ածանցման ու բարդութեան ժամանակ յ մնում է անփոփոխ։—Ցաղթել, անյաղթ, յաղթական, յաղթանդամ։

Բացի սրանից, Ց-ով գրւում են շատ յատուկ

անուններ։—Յիսուս, Յուդա, Յովհաննէս, Յովսէփ, Յակոբ, Յոփան և այլն։

բ) Բառի միջին և վերջին յ կարդացւում է, ինչպէս կէս ի (й)։—Այգի, հայ, թէյ, Նոյ։

գ) Բառի վերջում ա և ո ձայնաւորներից յետոյ սովորաբար գրւում է յ։—Ծառայ, երեխայ, գայ, կայ, երեկոյ, յետոյ, սիրոյ։

Բացառութիւն են կազմում.

1. (Դու) ասա, կարդա, գնա, խաղա...

2. Սա, դա, նա, սրա, դրա, նրա, սոքա, դոքա, նոքա, սոցա, դոցա, նոցա, իրա, քո։

3. Ահա, հիմա, ապա, աշկարա, այո։

4. Յատուկ անունները՝ Ադելայիդա, Աննա, Յուդա, Մուսա, Մոսկւա։

5. Օտար անունները՝ փաշա, բօշա, դրամա, պիեսա։

դ) Ց վերջացած բազմավանկ բառերը, երբ ի-բանցից յետոյ ընդունում են ս, ղ, ն, ներ՝ կորցնում են յ գիրը։—Ծառաս, ծառաղ, ծառան, ծառաներ։

ե) Ց կարդացւում է միայն միավանկ բառերի վերջում։—Հայ, բայ, թէյ, Նոյ։

Բացառութիւն են կազմում՝ կայ, գայ, տայ, լայ և այլն։

Իսկ բազմավանկ բառերից յետոյ յ համր է մնում. օրինակ՝ ծառայ, երեխայ, յետոյ, երեկոյ կարդացւում է՝ ծառա, երեխա, յետո, երեկո։

զ) Ց գրելով ա և ո ձայնաւորից յետոյ՝ կազմում է այ և ոյ (уй, ой) երկբարբառները (§ 2, 3)։—Զայն, եղբայր, լոյս, գոյն, հոյակապ, նոյեմբեր։

է) Յատուկ անունների և օտար բառերի վերջին ա-ից յետոյ յ չի գրւում. իսկ եթէ գրւում է, կարդացւում է։—Արփաչայ, Գեօղչայ, Շանխայ, տրամւայ, հարայ։

Վարժութիւն։—Գրեցէք թելադրութեամբ հետևեալը.

Յունիսը և յուլիսը ամառային ամիսներ են։ Յաբէթը Նոյի որդին էր։ Ախուրեանի միւս անունն է Արփաչայ։ Յակոբը Յովսէփի հայրն էր։ Աստուծոյ պահած գառը գայլը չի տանիլ։ Համբարձումը կարդաց մի հայերէն պօէմա, որ կոչւում է «Դալի-Մահրասա»։ Աննա, գնա Յովակիմին ասա, որ գայ այստեղ. յետոյ եկ, քեզ մի ընծայ տամ։ Մայր ցամաքը հինգ է՝ Եւրոպա, Ասիա, Աֆրիկա, Ամերիկա և Աւստրալիա։ Աշխարհս ունի չորս կողմ՝ արևելք, արևմուտք, հիւսիս և հարաւ։ Այսօր տեսայ մի քահանայ։ Տէր-Յովհաննէսը մեր քահանան է։ Մի երեխայ իր հօր հետ այգուց յետ էր գալիս տուն։ Ահա քո երեխաները գնում են։

27925-62

Ի, Վ

§ 13. ա) Ի և վ հնչւում են միատեսակ։ Սրանցից վ գրւում է միայն բառի սկզբում և ո ձայնաւորից յետոյ (վարդ, վէրք, ծով, խոռվել). իսկ միւս դէպքերում գրւում է ւ։—Հաւ, թեւ, թիւ, հիւանդ, հայատ, առաւօտ, զինւոր, առւակ։

Բարդ բառերի մէջ երկրորդ բաղադրիչի սկզբի վ տառը մնում է։—Վարդավառ, օրավար, գրավաճառ, արագավազ։

բ) Բառի սկզբում ո-ից առաջ վ չի գրւում։—Որդի, որբ, ոսկի, որսորդ։

գ) Ի՝ գրելով ի ձայնաւորից յետոյ, կազմում է իւ (ю) երկբարբառը (§ 2, 3)։—Իւղ, իւր, հիւր, գիւղ։

ՀՍՍՌ Գրքերի Պետական
ZUUՌ-Арм ССР
Ա. Մ. Մասնիչյան
ՀՍՍՌ Գրքերի Պետական

Ի կարդացուում է իբրև ю բառի սկզբում և արմատական բաղաձայնից առաջ (իւղ, հիւն). իսկ բառի վերջում և ձայնաւորից առաջ կարդացուում է ի (թիւ, հիւանդ)։

դ) Ի՝ դրւելով ո ձայնաւորից յետոյ, կազմում է ու (у)։—Ուղտ, ուլ, թուղթ, ջուր, կատու, լեզու։

ե) Ու երբեմն գործ է ածւում ձայնաւորից առաջ ւ տառի փոխարէն։—Աստուած, առուակ, նուէր, զուարթ։

Բայց այս ձևը մեր այժմեան լեզուում համարեա վերացել է, և ու-ի տեղ՝ գրւում է ւ։—Աստւած, առւակ, նւէր, զւարթ։

Վարժութիւն։—1. Արտագրեցէք հետևեալ բառերը և խաչերի փոխարէն, ուր հարկաւոր է, գրեցէք վ կամ ւ։

Х անք, Х ահան, ցա Х, կո Х, դի Х ան, տեսա Х, պառա Х, բարո Х, մատիտո Х, գրքո Х, զօրա Х ար, զօրա Х որ, Х արդապետ, Х ասակ, պատի Х, առա Х օտ, ա Х աղ, նա Х ակ, բոցա Х առ, ա Х ետիս, թագա Х որ, բան Х որ, մրգա Х աճառ, հաշի Х, հո Х ի Х, տերե Х, ձե Х, անձրե Х ային, թե Х ա Х որ։

2. Գրեցէք թելադրութեամբ հետևեալը.

Ծիտը ծառին ծլւրլում է, ծիւ, ծիւ, ծիւ,
Բաղէն գլխին պըտրտում է, վուշ վուշ, վուշ։
Ծիտը լռեց, ծիտը վախեց, վայ, վայ, վայ,
Բաղէն թռաւ, բաղէն փախաւ, ինչ լաւ էլաւ, հէ, հէ, հէ։

Ղ. Աղ.

—

Վարդանն ու Վաղարշակը մի օրավար հող վարեցին։ Որսորդը հրացանով մի վարազ սպանեց։ Հովի անկողինը։ Վահան վարդապետը առաւօտեան նաւակով ուղևորւեցաւ Սևանայ վանքը։ Զօրավարը քաջալերում է զինուորներին։

Ղ, Խ

§ 14. ա) Ղ բաղաձայններից առաջ սովորաբար հնչւում է խ. օրինակ՝ գրւում է թուղթ, աղքատ, կեղտ, բայց կարդացուում է թուխթ, ախքատ, կեխտ։

բ) Բաղաձայններից առաջ սովորաբար գրւում է ղ, իսկ խ շատ քիչ է գործ ածւում։

Խ բաղաձայններից առաջ գրւում է հետևեալ բառերում՝ ախտ, անխախտ, բախտ, երախտիք, ուխտ, ապուխտ, զմրուխտ, պանդուխտ, վախճան, ժխտել, Սանդուխտ Խոսրովիդուխտ։

գ) Ղ-ից յետոյ ը հնչւում է ինչպէս ա։—Աղբիւր, եղբայր, ողբալ։

Ռ, Ր

§ 15. ա) Ռ տառը հնչւում է կոշտ, իսկ ր՝ փափուկ։

Ռ սովորաբար գրւում է ն բաղաձայնից առաջ։—Թոռն, բուռն, նուռն, լեռնային, մեռնել, դառնութիւն, խառնուրդ։

Միւս բաղաձայններից առաջ գրւում է ր։—Վարդ, բարձ, արտ, կարճ, զարդ։

Բացառութիւն են կազմում ուռկան, ուռճանալ, խոպոտ, կառչ, կուռք և այլն։

բ) Կրկնութիւնով կազմած բառերի մէջ առաջին ռ-ն՝ ընկնելով բաղաձայնից առաջ, ր-ի է փոխւում։—Բարբառ, մրմուռ, գրգիռ, կրկռալ, թրթռալ։

Բայց երբ հարկաւոր է ցոյց տալ ձայնի սաստկութիւն, երկուսն էլ ռ է գրւում։—Մռմռալ, ճռճռալ, կռկռալ։

Բ, Գ, Դ, Ջ, Զ

§ 16. Բ տառից յետոյ ը, զ, ղ, ձ, ջ հնչւում են փափուկ՝ փ, ք, թ, ց, չ. օրինակ՝ որբ, Սարգիս, Վարդան, բարձր, մրջիւն կարդացւում են՝ որփ, Սարքիս, Վարթան, բարցր, մրչիւն։

Բ, զ, ղ, ձ, ջ տառերը հնչւում են իբրև փ, ք, թ, ց, չ նաև հետևեալ դէպքերում.

ա) Ձայնաւորներից յետոյ։—Գրաբար, թագաւոր, օղ, օձ, էջմիածին։

բ) Այ, ոյ երկբարբառներից յետոյ։—Այբբեն, այգի, գոյգ, մոյզ։

գ) Երբեմն մ, ն բաղաձայններից յետոյ։—Համբուրել, անգամ, անղամ։

ՏՈՂԱԴԱՐՁԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

§ 17. Բառերի մասերը մի տողից միւսը փոխադրելու համար՝ պէտք է գիտենալ տողադարձի կանոնները (правила переноса)։

Այդ կանոնները հիմնւած են բառերի վանկելու վրա և սրանք են.

ա) Երկու ձայնաւորից մէկը մնում է առաջին տողում, իսկ երկրորդը փոխադրւում է միւս տողը։—Լի-ազոր, մի-աբան, տա-եղերք։

բ) Երկու միատեսակ բաղաձայններից մէկը մընում է առաջին տողում, իսկ միւսը փոխադրւում է միւս տողը։—Սեղան-ներ, տիկին-ներ, այբ-բեն։

գ) Եթէ երկու ձայնաւորի մէջ կայ մի բաղաձայն, վերջինս անցնում է հետևեալ տողը։—Հո-գի, տա-րի։

դ) Եթէ երկու ձայնաւորի մէջ կայ երկու բաղաձայն, վերջիններս իրարից բաժանւում են։—Ար-դար, գառ-նուկ։

ե) Եթէ երկու ձայնաւորի մէջ կայ երեք բաղաձայն, միայն վերջին բաղաձայնն է փոխադրւում միւս տողը։—Պաշտ-պան, քաղց-րութիւն։

զ) Եթէ բառի մէջ երկու կամ երեք բաղաձայնի մօտ լսւում է ը, տողադարձի ժամանակ այդ գիրը գրւում է (§§ 4, բ. 11, բ)։—Գը-լուխ, թը-շնամի, դա-ռը-ն, մա-սը-ն։

է) Երկբարբառների գրերը տողադարձի ժամանակ միմեանցից չեն բաժանւում։—Հայ-բիկ, գիւ-ղում։

Տողադարձի նշանը կոչւում է ենթամնայ (-) . սա դրւում է առաջին տողի վերջին։

Վարժութիւն։—Ի՞նչպէս պէտք է վանկել հետևեալ բառերը տողադարձի ժամանակ.

Բարի, որդի, աշակերտ, աշակերտուհի, էութիւն, այգի, գոյութիւն, Հայաստան, միասին, որդիական, տներ, գրիչ, երկնքի, խորհրդաւոր, նշաններով, ամաններ, բարձր, բարձրանալ, կրկնել, ընտանիք, ընկեր, թրխկթրխկալ, գրէի, խօսէին, գիւղացի, մտերիմ, հարստանալ, սպասել, շտապել, շփոթել, սփռել, զրաղւել, սքանչանալ, զգուշանալ.

ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ

§ 18. Ամեն մի առանձին միտք, որ արտայայտում ենք բառերով, կոչւում է նախադասութիւն (предложеніе)։—Աշակերտը գրում է։ Եկաւ գարունը։ Օրը տաք է։ Սոխակը թռչուն է։

Նախադասութեան մէջ կան երկու գլխաւոր ան-

դամներ (главные члены)՝ *ա) ենթակայ* (подлежащее) *և բ) ստորոգեալ* (сказуемое)։

ա) Ենթակայ կոչւում է այն գլխաւոր առարկան, որի մասին խօսւում է նախադասութեան մէջ։— Աշակերտը, գարունը, օրը, սոխակը։

բ) Ստորոգեալ կոչւում է այն, ինչ որ ասւում է ենթակայի մասին։— Գրում է, եկաւ, տաք է, թռչուն է։

Ենթական պատասխանում է ո՞վ և ի՞նչ հարցերին, իսկ ստորոգեալը՝ ի՞նչ է անում, ի՞նչ արաւ կամ ի՞նչ կ'անի առարկան, ի՞նչ է լինում, ի՞նչպէս է, ի՞նչ է և այլն։

Ենթական ստորոգեալից ոչ մի կէտադրութեան նշանով չի բաժանւում։ Նախադասութեան վերջում դրւում է վերջակէտ (։)։

Վարժութիւն։— *Արտագրեցէք հետևեալ նախադասութիւնները, քաշեցէք ենթակաների տակ մի գիծ, իսկ ստորոգեալների տակ՝ երկու գիծ։*

Էլ չը խօսեց Արաքսը, յորձանք տւեց ահագին,
Օղակ-օղակ օձի պէս՝ առաջ սողաց մոլեգին։ Ռ. Պատ.

—

Գեղեցկանիստ է Աշտարակ,
Շատ այգիներ նա ունի.
Այնտեղ երկինքն է կապուտակ,
Այնտեղ օդն է քաղցրալի։
Այդ սիրուն գիւղն ունի մի գետ,
Եւ այն լի է ձկներով։ Ս. Շահ.

§ *19. Բացի գլխաւոր անդամներից, նախադասութեան մէջ լինում են երկրորդական անդամներ*

(второстепенные члены), *որոնք են՝ ա) որոշիչ* (опредѣленіе), *բ) լրացուցիչ* (дополненіе) *և գ) պարագայական բառեր* (обстоятельственныя слова)։

ա) Որոշիչ բառերը պատասխանում են ի՞նչպիսի, կամ ո՞րպիսի, ո՞ւմ, ինչի՞, քա՞նի, ո՞ր հարցերին։— Եղբայրս լաւ (ինչպիսի) մարդ է։ Յաբէթը Նոյի (ո՞ւմ) որդին էր։ Ծովի (ինչի՞) ջուրն աղի է։ Ես ունիմ երկու (քանի՞) գիրք։ Մարդարիտը առաջին (ո՞ր) դասարանումն է։ Թիֆլիս (ո՞ր) քաղաքը մեծ է։

Վարժութիւն։— 1. *Հետևեալ նախադասութիւնների մէջ գտէք որոշիչ բառերը և տակը գիծ քաշեցէք։*

Օձի կծածը կը սաղանայ, լեզուի կծածը չի սաղանալ։ Ծերանաս, ծերի պատիւն իմանաս։ Սուրբ Մեսրոպը Տարօն գաւառի Հացիկ գիւղից էր։ Մասիսը Հայաստանի ամենաբարձր սարն է. նրա գագաթը ծածկւած է ձիւնով։ Մեր երկիրը կոչւում է Կովկաս։ Յակոբն ունէր տասներկու որդի։

2. *Կազմեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ լինեն որոշիչ բառեր։*

բ) Լրացուցիչ բառերը պատասխանում են՝ ո՞ւմ, ի՞նչ(ը), ինչի՞, ումնի՞ց, ինչի՞ց,, ումնո՞վ, ինչո՞վ հարցերին։— Հայրը սիրում է որդուն (ո՞ւմ)։ Եղբայրն ստացաւ նամակ (ի՞նչ) իր քրոջից (ումնի՞ց)։ Ծնողները մխիթարւում են իրանց զաւակներով (ումնո՞վ)։ Նա գրում է մատիտով (ինչո՞վ)։

Վարժութիւն.— 1. *Գտէք լրացուցիչ բառերը հետևեալ ոտանաւորի մէջ.*

Այժմ վախով նա իր ձեռքը
Պարզում է անց կացողին.

Այժմ զուրկ է ամեն բանից,
Ջունի անգամ հացի գին։
Ամենայն օր իր մարմինը
Անուշահոտ ջրերով
Լւանում էր, մազը սանրում
Կրիայի նուրբ սանրով։ Մ. Նալ.

2. Հետևեալ նախադասութիւնների մէջ ամեն մի սորոգեալի մօտ գրէք լրացուցիչ բառ.

Ուսուցիչը պատմում է (ինչ)։ Կայենն սպանեց (ում)։ Հարուստն օգնում է (ում)։ Աշխատասէրն արժանի է (ինչի)։ Գրատախտակի վրա գրում են (ինչով)։ Աղքատը զուրկ է (ինչից)։ Երեխան ընծայ ստացաւ (ումից)։ Հայրը մօտեցաւ (ում)։ Դաշտը զարդարւում է (ինչով)։

գ) Պարագայական բառերը ցոյց են տալիս գործողութեան՝

1. Տեղը՝ պատասխանելով ո՞ր տեղ, ո՞ւր, ո՞ր տեղից հարցերին։—Գիւղացին աշխատում է դաշտում (որտեղ)։ Նա դաշտից (որտեղից) գնում է տուն (ուր)։

2. Ժամանակը՝ պատասխանելով ե՞րբ, մինչև ե՞րբ, ո՞րքան ժամանակ, ո՞ր ժամանակից հարցերին։—Մայիսին (երբ) բացւում է վարդը։ Առաւօտից (որ ժամանակից) մինչև երեկոյ (մինչև երբ) անձրև էր գալիս։

3. Որպիսութիւնը՝ պատասխանելով ի՞նչպէս, ի՞նչ տեսակ հարցերին։—Սոխակը երգում է անուշակ (ինչպէս)։

4. Պատճառը և նպատակը՝ պատասխանելով ինչո՞ւ, ինչի՞ համար, ինչի՞ց հարցերին։—Աշակերտն իր ջանասիրութեան համար (ինչի համար, ինչու) պարգև ստացաւ։ Ձկնորսը գնաց ձուկ ըռնելու (ինչու)։ Ջուրը սառչում է ցրտից (ինչից)։

Պարագայական բառերը միւս անդամներից ոչ մի կէտով չեն բաժանւում։

Վարժութիւն։—4. Գտէք պարագայական բառերը հետևեալ նախադասութիւնների մէջ.

Մայր Արաքսի ափերով քայլամոլոր գնում եմ,
Հին-հին դարուց յիշատակ ալեաց մէջը պտրում եմ։ Ռ. Պատ.
Մեզնից շատ առաջ կար մի թագաւոր։
Մեսրոպ գտաւ հայոց տառերը 406 թւին։
Առաւօտեան ամենքը գնում են իրանց գործին։
Անձրև օրը հաւերին ջուր տուող շատ կը լինի։

2. Կազմեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ լինեն պարագայական բառեր։

Նախադասութեան մէջ լինում են նաև կոչական բառեր (звательныя слова), որոնք ցոյց են տալիս՝ թէ ումն է դիմում խօսողը։—Հա՛յր մեր, Որ երկնքումն ես։ Տr. Աղօթք։ Գնա՛, որդեա՛կ, աշխարհս անցիր, պանծալի անուն մեծի դու ստացիր։ Ռ. Պատ.

Երբ կոչական բառը դրւած է նախադասութեան սկզբում կամ վերջում, միւս անդամներից բաժանւում է ստորակէտով (,). իսկ երբ դրւած է նախադասութեան միջում, երկու կողմից է ստորակէտ առնում։

Կոչական բառերի գլխին դրւում է շեշտ (՝)։—Հա՛յր, որդեա՛կ։

Շեշտը դրւում է նաև հրաման կամ խնդիր պարունակող բառերի վրա։—Գնա՛, անցի՛ր, ստացի՛ր։

Վարժութիւն։—Հետևեալ նախադասութիւնների մէջ գը-

տէք կոչական ու հրաման կամ խնդիր պարունակող բառերը և դրէք, ուր հարկաւոր է, շեշտ ու ստորակէտ.

Արի դու արի սիրուն նոր տարի նոր օրեր բեր մեզ։ Եկէք երեխէք եկէք ձեռք ձեռքի տանք պար բռնենք։ Արև արև եկ եկ գիզի քարին վէր եկ։ Մանիր մանիր իմ ճախարակ մանիր սպիտակ մալանչներ։ Ղզ. Աղ. Կարդա՛ մայ իմ խելօք մանուկ։ Ա. Ծաs.

ԲԱՆԻ ՄԱՍԵՐ

§ 20. Ամեն մի առանձին վերցրած բառ կոչւում է բանի կամ խօսքի մաս (часть рѣчи)։

Բանի մասերն իններ տեսակ են՝

1. Գոյական անուն (имя существительное),
2. Ածական անուն (имя прилагательное),
3. Դերանուն (мѣстоименіе),
4. Թւական անուն (имя числительное),
5. Բայ (глаголъ),
6. Մակբայ (нарѣчіе),
7. Նախդիր (предлогъ) և յետադիր (послѣлогъ),
8. Շաղկապ (союзъ),
9. Միջարկութիւն (междометіе)։

ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ

ԱՌԱՐԿԱՑ

§ 21. Ամեն մի իր կամ բան, որ ճանաչում ենք մեր արտաքին զգայարանքներով (տեսանելիքով, լսելիքով, ճաշակելիքով, հոտոտելիքով, շօշափելիքով) կամ մեր մտքով, կոչւում է առարկայ (предметъ)։— Գիրք, աշակերտ, քաջութիւն, երկիւղ։

Այն առարկան, որ ճանաչում ենք մեր արտաքին զգայարանքներով, կոչւում է նիւթական (чувственный)։— Տուն, զանգակ, աղ, վարդ, ձիւն։

Իսկ այն առարկան, որ ճանաչում ենք մեր մտքով, կոչւում է մտաւոր (умственный)։— Ուրախութիւն, բոպէ, հոգի։

Վարժութիւն։— Հետևեալ առարկաներից որն է նիւթական և որը մտաւոր.

Ջուր, ծառ, քամի, սառուց, ծաղիկ, աշխատանք, բարութիւն, մատիա, ոյժ, եռանդ, փայտ, սէր, սեր, հօտ, հոտ, թռչուն, կարծիք, մահ, կատու, կարիք, Աստուած, հրեշտակ, երկաթ, բամբակ, կաթ, այգի։

§ 22. Նիւթական առարկան լինում է շնչաւոր (одушевленный) և անշունչ (неодушевленный)։

Շնչաւոր կոչւում է այն առարկան, որ իր կամ-

քով կարող է շարժուել և փոխուել մի տեղից միւսը։— Մարդ, գազան, թռչուն։

Իսկ անշունչ կոչուում է այն առարկան, որ իր կամքով չի կարող շարժուել և փոխուել մի տեղից միւսը։—Սեղան, գիրք, քար, փայտ։

Վարժութիւն։—Հետևեալ առարկաներից որն է շնչաւոր և որն անշունչ.

Ձի, աթոռ, գրիչ, հաւ, քանոն, աման, ձուկ, զինուոր, հովիւ, ոչխար, կօշիկ, թուղթ, գլխարկ, խոհարար, աղջիկ, բաղ, հաց, սաղ, տետրակ, վարժապետ, սպայ, պայուսակ, ճանճ, նապաստակ, գրչահատ։

ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ ԵՒ ՆՐԱ ՏԵՍԱԿՆԵՐԸ

§ 23. Ամեն մի առարկայի անուն կոչուում է *գոյական* (имя существительное)։—Երեխայ, ծառ, հօտ, Արաքս, բարութիւն։

Գոյական անունները լինում են՝ *յատուկ* (собственное), *հասարակ* (нарицательное) և *հաւաքական* (собирательное)։

Յատուկ կոչուում են այն անունները, որոնք պատկանում են միայն մէկ առարկայի։—Թիֆլիս, Արարատ, Կուր, Մարիամ։

Հասարակ կոչուում են այն անունները, որոնք պատկանում են շատ միատեսակ առարկաների։—Թռչուն, տետրակ, ծաղիկ։

Հաւաքական կոչուում է միասին հաւաքուած միատեսակ առարկաների ընդհանուր անունը։—Հօտ, ջոկ, երամ, գօրք։

Վարժութիւն։—Որոշեցէք հետևեալ գոյականների տեսակները.

Արշակ, անտառ, աշակերտ, Մոսկուա, վաշտ, սենեակ, շաքար, ալիւր, թանաք, թանաքաման, խումբ, տուն, Բագու, Անի, փողոց, նախիր, Ախուրեան, Ազուլիս, աթոռ, պատկեր, Մարգարիտ, մարգարիտ, Եղիսաբէթ, Աղելայիդա, Յարութիւն, յարութիւն, Շուշան, շուշան, Աստղիկ, աստղիկ։

ՍԵՌ

§ 24. Գոյական անունները հայոց լեզուում չ'ունեն քերականական *սեռ* (родъ)։

Քերականական սեռ ունեն միայն այն անունները, որոնք պատկանում են կին-մարդկանց. սրանք վերջանում են՝ *ուհի, անուշ* և *դուխտ*։—Աշակերտ-ուհի, ուսուցչ-ուհի, հայ-ուհի, Հայկ-անուշ, Վարդ-անուշ, Խոսրովի-դուխտ։

Շնչաւոր առարկաներին պատկանող միւս անունների սեռը իմացուում է միայն նշանակութիւնով. օրինակ՝ հայր, եղբայր, պապ, աքաղաղ *արական* (мужескій) *սեռի* անուններ են. իսկ մայր, քոյր, հարս, տատ, մարի, մաքի—*իգական* (женскій) *սեռի*։

ԹԻՒ

§ 25. Գոյական անուններն ունեն երկու *Թիւ* (число)՝ *եզակի* (единственное) և *յոգնակի* (множественное)։

Երբ խօսուում է մի առարկայի մասին, գործ է ածուում *եզակի Թիւ*։—Հաւ, պատ, որսորդ, սեղան։

Իսկ երբ խօսուում է երկու կամ աւելի առարկաների մասին, գործ է ածուում *յոգնակի Թիւ*։—Հաւեր, պատեր, որսորդներ, սեղաններ։

Յոգնակի թիւը կազմւում է եզակիից, ընդունելով եր կամ ներ վերջաւորութիւնը։ Միավանկ բառերը վերջանում են եր։—Հաւ-եր, ծառ-եր, պատ-եր, ան-եր։

Իսկ բազմավանկ բառերը վերջանում են ներ։—Մատիտ-ներ, աշակերտ-ներ, ամանեղէն-ներ։

Մի քանի միավանկ բառեր՝ եզակի թւում կորցնելով իրանց արմատական ն վերջաւորութիւնը (օր. ձեռ, ոտ, դուռ, գառ, ձուկ, մուկ և այլն), յոգնակի թւում վերջանում են ներ (ձեռներ, ոտներ, դռներ, գառներ, ձկներ, մկներ և այլն)։

Ծանօթ.—Յատուկ անունները յոգնակի թիւ չունեն։

ՀՈԼՈՎ

§ 26. Առարկաների մէջ եղած յարաբերութիւնները ցոյց տալու համար՝ գոյական անունները փոփոխում են իրանց վերջաւորութիւնները. այդ փոփոխութիւնները կոչւում են հոլով (падежъ)։

Հոլովները եօթն են՝

1. Ուղղական (именительный)—ում, ինչ.
2. Հայցական (винительный)—ում, ինչ.
3. Սեռական (родительный)—ում, ինչի.
4. Տրական (дательный)—ում, ինչի.
5. Բացառական (отложительн.)-ումնից, ինչից.
6. Գործիական (творительный)-ումնով, ինչով.
7. Ներգոյական (мѣстный)—ումնում, ինչում.

Բայի սրանցից, կայ և կոչական (звательный) հոլով, որ նման է ուղղականին։

Ով հարցը վերաբերում է շնչաւոր առարկաներին, իսկ ի՞նչ՝ անշունչ առարկաներին։

Գոյական անունների փոփոխութիւնը հոլովով և թւով կոչւում է հոլովում (склоненіе)։

ՀՈԼՈՎՆԵՐԻ ՎԵՐՋԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

§ 27. Ուղղական հոլովը եզակի թւում չունի ոչ մի վերջաւորութիւն։ Զանազանւում են միայն բառերի ընները։

Իսկ յոգնակի թւում բոլոր անունները վերջանում են եր կամ ներ (§ 25)։

Երբ ընդհանուր միտքը մասնաւորի է փոխւում, ուղղական հոլովն ընդունում է ը (ն) յօդը (§ 33)։

Սեռականը եզակի թւում ունի երեք տեսակ կանոնաւոր վերջաւորութիւն՝ ի (հաց-ի), ու (գին-ու), ան կամ եան (ձկ-ան, բարութ-եան)։

Սեռականի յոգնակին՝ ընդունելով եր կամ ներ, վերջանում է միշտ ի։ — Հաց-եր-ի, գինի-ներ-ի, ձկ-ներ-ի, բարութիւն-ներ-ի։

Տրականը նման է սեռականին։

Հայցականը սովորաբար նման է ուղղականին։

Բայց բանական առարկաների անունները (հայր, մայր, աշակերտ, գինւոր, խոհարար), երբ իրանց վերջում ունեն ա, ո, ն (ը) մասնիկը, հայցականում ընդունում են տրականի վերջաւորութիւն։—Աշակերտիս, աշակերտիդ, աշակերտին։

Հայցականում տրականի վերջաւորութիւն են ընդունում նաև այն յատուկ անունները, որոնք վերաբերում են մարդկանց։—Արամին, Մարիամին, Լեոնին։

Բացառականը եզակիում վերջանում է ից կամ ուց։—Հաց-ից, գին-ուց, ձկն-ից, բարութիւն-ից։

Ցոգնակին՝ ընդունելով եր կամ ներ, միշտ վերջանում է ից։—Հաց-եր-ից, գինի-ներ-ից, ձկ-ներ-ից, բարութիւն-ներ-ից։

Գործիականը եզակիում վերջանում է ով կամ եամբ։—Հաց-ով, գին-ով, ձկն-ով, բարութիւն ով կամ բարութ-եամբ։

Ցոգնակին ընդունելով եր կամ ներ, միշտ վերջանում է ով։—Հաց-եր-ով, գինի-ներ-ով, ձկ-ներ-ով, բարութիւն-ներ-ով։

Ներգոյականը եզակիում վերջանում է ում։—Հաց-ում, գին-ում, ձկն-ում, բարութիւն-ում։

Ցոգնակին՝ ընդունելով եր կամ ներ, ընդունում է նոյն ում վերջաւորութիւնը։—Հաց-եր-ում, գինի-ներ-ում, ձկ-ներ-ում, բարութիւն-ներ-ում։

Շնչաւոր առարկաների (մանաւանդ մարդկանց) անունները ներգոյականում շատ անգամ ընդունում են սեռականի վերջաւորութիւն և մէջ բառը։—Մարդու մէջ, աշակերտների մէջ։

§ 28. ՀՈԼՈՎՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ

Եզակի		Ցոգնակի	
—	Ո. Հ.	եր, ներ	
ի, ու, ան (եան)	Ս. Տ.	»	»+ի
ից, ուց	Բ.	»	»+ից
ով	Գ.	»	»+ով
ում	Ն.	»	»+ում

ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ

§ 29. Գոյականներն ունեն երեք հոլովում, որոնք որոշւում են եզակի սեռականի վերջաւորութիւններով (§ 27).

Ա.	հոլովում—ի	հաց-ի
Բ.	հոլովում—ու	գին-ու
Գ.	հոլովում—ան, եան	ձկ-ան, բարութ-եան։

Ա. ՀՈԼՈՎՈՒՄ

(ի)

§ 30. Ա. հոլովման պէս հոլովւում են գոյականների մեծ մասը։

Եզակի

Ո. Հ.	ծով	որսորդ
Ս. Տ.	ծով-ի	որսորդ-ի
Բ.	ծով-ից	որսորդ-ից
Գ.	ծով-ով	որսորդ-ով
Ն.	ծով-ում	որսորդ-ում

Ցոգնակի

Ո. Հ.	ծով եր	որսորդ-ներ
Ս. Տ.	ծով-եր-ի	որսորդ-ներ-ի
Բ.	ծով եր-ից	որսորդ-ներ-ից
Գ.	ծով-եր-ով	որսորդ-ներ-ով
Ն.	ծով-եր-ում	որսորդ-ներ-ում

Բ. ՀՈԼՈՎՈՒՄ

(ու)

§ 31. Բ. հոլովման պատկանում են այն գոյականները, որոնք եզակի ուղղականում վերջանում են ի։

Եզակի

Ո. Հ.	գինի	ձի
Ս. Տ.	գին-ու	ձի-ու
Բ.	գին-ուց	ձի-ուց
Գ.	գին-ով	ձի-ով
Ն.	գին ում	ձի-ում

Յոգնակի

Ո. Հ.	գինի-ներ	ձի-եր
Ս. Տ.	գինի-ներ-ի	ձի-ե-րի
Բ.	գինի-ներ-ից	ձի-ե-րից
Գ.	գինի-ներ-ով	ձի-եր-ով
Ն.	գինի-ներ-ում	ձի-եր-ում

Գ. ՀՈԼՈՎՈՒՄ

(ան, եան)

§ 32. Գ. հոլովման պատկանում են այ գոյականները, որոնք եզակի սեռականում վերջանում են ան կամ եան։ Եան վերջանում են այն գոյականները, որոնք ուղղականում ունեն ին վերջաւորութիւնը։

Եզակի

Ո. Հ.	դուռ(ն)	բարութ-ին
Ս. Տ.	դռ-ան	բարութ-եան
Բ.	դռն-ից	բարութ-ին-ից
Գ.	դռն-ով	բարութ-ին-ով
Ն.	դռն-ում	բարութ-ին-ում

Յոգնակի

Ո. Հ.	դռն-եր	բարութիւն-ներ
Ս. Տ.	դռն-եր-ի	բարութիւն-ներ-ի
Բ.	դռն-եր-ից	բարութիւն-ներ-ից
Գ.	դռն-եր-ով	բարութիւն-ներ-ով
Ն.	դռն-եր-ում	բարութիւն-ներ-ում

Դուռ բառի պէս են հոլովւում ձուկ (ձկ-ան), լեառ (լեռ-ան), զարուն (գարն-ան), աշուն (աշն-ան) և այլն։

Ում վերջացած անունները հոլովւում են Ա. և Գ. հոլովման պէս։—Խոստում—խոստումի կամ խոստման։

Ին վերջացած գոյականների եզակի գործիականում երբեմն գործ է ածւում գրաբարի եամը վերջաւորութիւնը։—Բարութ-եամբ (փոխանակ՝ բարութիւն-ով), ար-եամբ (փոխանակ՝ արիւն-ով)։

ՅՕԴ

§ 33. Յօդ կոչւում է այն մասնիկը, որ՝ դրւելով անւան վերջին՝ տալիս է նրան որոշ նշանակութիւն և ընդհանուր միտքը մասնաւորի է փոխում։—Զինուոր-ը, մարդարէ-ն, սեղան-ը։

Ը և ն որոշող յօդեր են. սրանցից ը դրւում է բաղաձայն գրերից յետոյ, իսկ՝ ն՝ ձայնաւորներից յետոյ։

Ը յօդը փոխուում է ն-ի, երբ յաջորդ բառը ըսկըսուում է ձայնաւորով։—Զմեռն անցաւ։

Առանց որոշող յօդի՝ անուններն ունեն ընդհանուր միտք։—

Փողոցով զինուր անցաւ։

Սենեակում սեղան է դրուած։

Այս օրինակներում յայտնի չէ՝ թէ խօսքը որ զինուորի կամ սեղանի մասին է։ Զինուր կամ սեղան ասելով՝ հասկանում ենք մի որևիցէ զինուոր կամ սեղան։ Ուրիշ է, եթէ ասենք՝

Փողոցով անցաւ զինուորը։

Սենեակում դրուած է սեղանը։

Ասելով զինուորը կամ սեղանը, իսկոյն հասկանում ենք, որ խօսքը մի որոշ ու մեզ յայտնի զինուորի կամ սեղանի մասին է։

Կայ և անորոշ յօդ մի, որ դրուում է անունների սկզբում, երբ խօսքը մի մասնաւոր և անծանօթ առարկայի մասին է։—Մեզնից շատ առաջ կար մի թագաւոր։

§ 34. Յօդ ունեցող գոյականները հոլովուում են այսպէս.

Եզակի

Ո. զինուոր-ը	սեղան-ը
Ս. զինուորի-	սեղանի-
Տ. զինուորի-ն	սեղանի-ն
Հ. զինուորի-ն	սեղան-ը
Բ. զինուորից-(ը)	սեղանից-(ը)
Գ. զինուորով-(ը)	սեղանով-(ը)
Ն. զինուորում-(ը)	սեղանում(-ը)

Յոգնակի

Ո. զինուորներ-ը	սեղաններ-ը
Ս. զինուորների-	սեղանների-
Տ. զինուորների-ն	սեղանների-ն
Հ. զինուորների-ն	սեղաններ-ը
Բ. զինուորներից-(ը)	սեղաններից-(ը)
Գ. զինուորներով-(ը)	սեղաններովը-(ը)
Ն. զինուորներում-(ը)	սեղաններում (ը)

Ինչպէս տեսնում ենք, ն յօդը սեռականում բաց է թողնուում։ Բացառականում, գործիականում և ներգոյականում ը յօդը շատ անգամ բաց է թողնուում։

Կան դիմորոշ յօդեր ա, ղ, որոնք գործ ածելով անունների հետ միասին, անխտիր մնում են բոլոր հոլովների վերջին։—Մատիա-ա, մատիա-ղ, մատիտի-ա, մատիտի-ղ. մատիտից-ա, մատիտից-ղ. մատիտով-ա, մատիտով-ղ և այլն։

Բանական առարկաների անունները ա, ղ, ը (ն) յօդերով և մարդկանց վերաբերող յատուկ անունները հայցականում ընդունում են տրականի վերջաւորութիւն (§ 27)։

ԱՆԿԱՆՈՆ ՀՈԼՈՎՈՒՄ

§ 35. Անկանոն կամ զարտուղի կոչուում է այն հոլովումը, որ դուրս է ընդհանուր կանոնից։

Անկանոն կերպով են փոփոխուում, օրինակ՝

կին, քոյր, հայր, մայր, եղբայր, տէր, շուն, տուն և այլն,

Անկանոն հոլովող գոյականները եզակի սեռականում գլխաւորապէս ունեն ոջ և օ, որոնք պահպանւում են եզակի թի միւս հոլովներում։

	Եզակի		Յոգնակի	
Ո.	Հ. կին	հայր	կանայք	հայրեր
Ս.	Տ. կնոջ	հօր	կանանց	հայրերի
	Բ. կնոջից	հօրից	կանանցից	հայրերից
	Գ. կնոջով	հօրով	կանանցով	հայրերով
	Ն. կնոջում / կնոջմէջ	հօրում / հօր մէջ	կանանցում / կանանցմէջ	հայրերում / հայրերի մէջ

Կին բառի պէս եզակի թւում հոլովւում են՝ քոյր, տէր, ընկեր, աներ, տալ և այլն։

Հայր բառի պէս են հոլովւում մայր, եղբայր, սանահայր, սանամայր, հօրեղբայր և այլն։

Ժամանակ ցոյց տուող անունները, օրինակ՝ օր, ցերեկ, գիշեր, ժամ, տարի, ամառ և այլն, բացի կանոնաւոր հոլովումից՝ ունեն նաև եզակի սեռականում ւայ (ուայ) և բացառականում ւանից (ուանից)։—Օրւայ, օր-ւանից. տար-ւայ տար-ւանից։

Անկանոն են հոլովւում սէր և Աստուած բառերը, որոնք դառնում են՝ սիրոյ, Աստուծոյ, սիրուց, Աստուծուց և այլն։ Այս ձևերից սիրոյ և Աստուծոյ գրաբարից են առնւած։

Մարդ եզակիում լինում է՝ մարդու, մարդուն, մարդով. իսկ յոգնակիում՝ մարդիկ, մարդկանց, մարդկանցից և այլն։

ՓՈԽՈՂ ԵՒ ԿՈՐԶՈՂ ԳՐԵՐ

§ 36. Բառերի աճման ժամանակ, վերջին վանկի ի, ու, է ձայնաւորները և եա, եայ, ոյ զրկւելով շեշտից՝ նւազում են ու սովորաբար փոխւում այսպէս.

ա) ի և ու դառնում են ը, որը սովորաբար չի գրւում (§§ 4, 11, բ), այլ պահպանւում է միայն տողադարձի ժամանակ։—Գիրք—գըրքի=գրքի. երկի՛նք—երկընք-քի=երկնքի։ Ջո՛ւր—ջը-րի=ջրի. խորհո՛ւրդ—խորհըրդի=խորհրդի։

բ) է դառնում է ի։—Տէր, տիրոջ, տիրել։

գ) եա երկբարբառը բարդ բառերում կորցնում է իր երկրորդ բաղադրիչ մասը։—Սենեակ,—սենեկապետ. մատեան—մատենագիր։

Իսկ պարզ բառերում եա մնում է անփոփոխ։—Սենեակ, սենեակի, սենեակներ, մատեանի, մատեաններում և այլն։

դ) եայ դառնում է է։—Քրիստոնեայ—քրիստոնէութիւն։

ե) ոյ դառնում է ու։ Զգոյշ—զգուշանալ. համբոյր—համբուրել.

Կան բառեր, որոնց մէջ ի, ու չեն կորչում։—Կարծիք—կարծիքի. հայրենիք—հայրենիքի. մայրիկ—մայրիկի. անուն—անունի. հեղուկ—հեղուկի. անուս—անուսի։

Վարժութիւն։—Հոլովեցէք հետևեալ անունները.

Հաւ, հաւը, տունս, երդում, հոլովում, ընկերդ, հայելի, մատանիս, բանալին, ոտ, ձեռ, անուն, աշուն, արիւն, ձիւն,

եզ, ձուկ, Յարութիւն, յարութիւն, խորհուրդ, ժողովուրդ, երկինք, տիկին, կնիկ, աղջիկ, սանահայր, սեր, սէր, քաջութիւն, զօրութիւն, առաւօտ, գիշեր, ցերեկ, ժամ, մայիս, գիր, ձեռագիր, բուն, հաւաքուն։

§ 37. ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ա) Յատուկ գոյական անունները միշտ սկսւում են մեծատառով։—Թիֆլիս, Արաքս, Լեւոն, Մարդարիտ։

բ) Այն յատուկ անունները, որոնք ուղղականում վերջանում են ա, միւս հոլովումներում ա-ից յետոյ ընդունում են յ։—Աննա—Աննայի. Մոսկուա—Մոսկուայում։

գ) Յ վերջացած անունները (փեսայ, երեխայ, քահանայ), երբ ընդունում են յօդ կամ յոգնակի թւի վերջաւորութիւն, կորցնում են յ գիրը։—Փեսան, երեխաս, քահանաները։

Բացառութիւն են կազմում միավանկ բառերը։—Հայ—հայը, հայեր. թէյ—թէյս, թէյդ և այլն։

դ) Ժամանակ ցոյց տւող անունների սեռականի անկանոն ւայ վերջաւորութիւնը գրւում է յ-ով։—Տարւայ, մայիսւայ, օրւայ, ամառւայ։

ե) Մի քանի անուններ յոգնակի ուղղականում ներ կամ ներ վերջաւորութեան տեղ՝ կարող են ընդունել գրաբարի վերջաւորութիւնը՝ ք, որ սեռ. հոլովում դառնում է ց։—Որդիք—որդոց, հայք—հայոց, յոյնք—յունաց։

զ) Մարդիկ վերջանում է կ-ով։

ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒՆ

§ 38. Առարկաների որպիսութիւնը կամ յատկութիւնը ցոյց տւող բառը կոչւում է ածական անուն (имя прилагательное)։

Ածականները սովորաբար գրւում են գոյականներից առաջ և պատասխանում են ինչպիսի՞ և ո՞ր հարցերին։—Բարի մարդ, մեծ քաղաք, ոսկէ մատանի, զարնանային անձրև։

Ածականները լինում են երկու տեսակ՝

1) Որակական (качественное)։—Բարի, մեծ։

2) Յարաբերական (относительное)։ — Ոսկէ, զարնանային։

Որակական ածականները ցոյց են տալիս առարկայի բնական որպիսութիւնը, իսկ յարաբերականները՝ մի առարկայի յարաբերութիւնը միւսի հետ։

Վարժութիւն։—1. Հետեւեալ նախադասութիւնների մէջ որոշեցէք որակական և յարաբերական ածականները։

Հին Արաքսը զարմանալի քմահաճութիւններ ունէր Անյիշելի ժամանակներից յամառութեամբ կռւում էր իր անհաւասար եզերքի հետ և, կարծես, դժգոհ էր նեղ շաւղից։ Երբեմն երկու լեռնային զօտիներ միաբանում էին և սեղմում նրան իրանց անձուկ և խորին ձորակի մէջ։ Բաֆֆի։

2. Գրեցէք մի քանի ածականներ, որոնք ցոյց տան յարաբերութիւն՝ նիւթի, տեղի, ժամանակի և քաշի հետ։

ՀԱՄԵՄԱՏՈՒԹԵԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐ

§ 39. Որակական ածականներն ունեն երեք համեմատութեան աստիճաններ (степени сравненія)՝ 1. Դրական (положительная), 2. Բաղդատական (сравнительная) և 3. գերադրական (превосходная)։

1 Դրական աստիճանը ածականի սկզբնական ձևն է։—Արամը խելօք աշակերտ է։

2. Բաղդատական աստիճանը կազմուում է՝ աւելի բառի կամ բացառական հոլովի օգնութեամբ։—

Արամն աւելի խելօք աշակերտ է, քան թէ Հայկը։

Արամը Հայկից խելօք աշակերտ է։

Աւելի բառը պահանջում է քան թէ։

Աւելի բառը գործ է ածւում և բացառական հոլովի հետ միասին։—Արամը Հայկից աւելի խելօք է։

3. Գերադրական աստիճանը կազմուում է ամենա մասնիկի կամ շատ, սաստիկ, անչափ, ըոլորից, ամենից բառերի օգնութեամբ։—

Արամն ամենախելօք աշակերտ է։

Արամը շատ խելօք աշակերտ է։

Արամը ըոլորից խելօք աշակերտ է։

Վարժութիւն։—Գրեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ լինեն հեաևեալ ածականների բաղդատական և գերադրական աստիճանները.

Բարձր, հաստ, տաք, ծեր, փոքր, հարուստ, աղքատ, ծանր, բարի, գեղեցիկ, հաւատարիմ, ընկերասէր։

ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ

§ 40. Ածականները՝ գոյականի հետ վարելիս՝ չեն փոփոխուում։

	Եզակի	Յոգնակի
Ո. Հ.	լաւ աշակերտ	լաւ աշակերտներ
Ս. Տ.	լաւ աշակերտի	լաւ աշակերտների
Բ.	լաւ աշակերտից	լաւ աշակերտներից
Գ.	լաւ աշակերտով	լաւ աշակերտներով
Ն.	լաւ աշակերտում	լաւ աշակերտներում

Միայնակ գործ ածւող ածականներն ընդունում են գոյականի միտք և հոլովւում են գոյականների Ա. հոլովման պէս։—

	Եզակի	Յոգնակի
Ո. Հ.	լաւ	լաւ-եր
Ս. Տ.	լաւ-ի	լաւ-եր-ի
Բ.	լաւ-ից	լաւ-եր-ից
Գ.	լաւ-ով	լաւ-եր-ով
Ն.	լաւ-ում	լաւ-եր-ում

§ 41. ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

1) Այն յարաբերական ածականները, որոնք ցոյց են տալիս առարկայի նիւթը, վերջանում են ի, է, (եայ), եղէն։—Արծաթ-ի, երկաթ-է, քար-եղէն։

2) Այն ածականները, որոնք գոյականների հետ միասին կազմում են յատուկ անուն, գրւում են մեծատառով։—Կարմիր ծով, Մեռեալ ծով, Նոր աշխարհ, Արա Գեղեցիկ։

3) Ածականների գերադրական աստիճանում ամենա մասնիկը գրւում է բառի հետ միասին։— Ամենաբարի, ամենալաւ, ամենամեծ։

Իսկ եթէ ամենա մասնիկի փոխարէն՝ լինում են ամենից, բոլորից, շատ և այլն, այն ժամանակ սրանք՝ իբրև առանձին բառեր՝ գրւում են ջոկ։—Ամենից բարի, բոլորից լաւ։

ԴԵՐԱՆՈՒՆ

§ 42. Այն բառերը, որոնք կատարում են գոյական և ածական անունների դեր, կոչւում են դերանուն (мѣстоименіе)։—Ես, դու, այս, սա, որ։

Դերանունները լինում են եօթ տեսակ.

1. Անձնական (личныя)՝ ես (առաջին դէմք), դու (երկրորդ դէմք), նա (երրորդ դէմք)։

2. Ցուցական (указательныя)՝ սա, դա, նա, այս, այդ, այն և այլն։

3. Հարցական (вопросительныя) ո՞վ, ի՞նչ, ո՞ր և այլն։

4. Յարաբերական (относительныя)՝ որ, ով կամ ով որ, ինչ կամ ինչ որ։

5. Որոշեալ (опредѣлительныя)՝ իւրաքանչիւր, բոլոր, ամեն, ամեն մէկ, ինքը և այլն։

6. Անորոշ (неопредѣленныя)՝ ոմն, մի քանի, ովոր, ինչ-որ և այլն։

7) Բացասական (отрицательныя)՝ ոչ ոք, ոչինչ, ոչ մէկ և այլն։

Հայոց լեզուում չը կան առանձին ստացական (притяжательныя) դերանուններ. սրանց տեղ գործ են ածւում ես, դու, ինքն դերանունների սեռականը՝ իմ, քո, իւր։

§ 43. Դերանուններն ունեն առանձին մասնիկներ՝ ս, դ, ն (ը), որոնք կոչւում են դերանանական յօդեր։

Սրանցից ս ծառայում է առաջին դէմքին, դ՝ երկրորդ, ն (ը)՝ երրորդ։

Դերանուանական յօդերը գործ են ածւում երեք տեսակ դերանունների տեղ.

1) Անձնական։—Վարժապետ-ս, աշակերտ-ը (այսինքն—ես՝ վարժապետս, դու՝ աշակերտդ)։

2) Ստացական։—Վարժապետ-ս, աշակերտ-ը (այսինքն՝ իմ վարժապետը, քո աշակերտը)։

3) Ցուցական։—Վարժապետ-ս, աշակերտ-ը (այսինքն՝ այս վարժապետը, այդ աշակերտը)։

Վարժութիւն։—Հետեւեալ տառանաւորից ջոկեցէք դերանունները և որոշեցէք նրանց տեսակը.

Այն ով է կանգնած ամբիոնի վրայ,
Դողդոջուն ձեռքերն երկինք ամբարձած,
Բազմութեան ուշքը դէպի նա դարձած,
Որին ամենքը հայր են անւանում,
Որի լոկ խօսքը օրէնք է նոցա...
Երբ մենք թաթախւած Աղամայ մեղօք,
Եկանք այս աշխարհ՝ լցւած ցաւերով,
Ո՞վ մեզ սփոփեց իւր սուրբ խօսքերով։ Ռ. Պատ.

ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ

§ 44. Անձնական դերանուններ.

Եզակի

Ո.	ես	դու	նա
Ս.	իմ	քո	նրա (նորա)
Տ. Հ.	ինձ	քեզ	նրան (նորան)
Բ.	ինձանից	քեզանից	նրանից (նորանից)
Գ.	ինձանով	քեզանով	նրանով (նորանով)
Ն.	ինձանում	քեզանում	նրանում (նորանում)

Յոգնակի

Ո.	մենք	դուք	նրանք (նորանք)
Ս.	մեր	ձեր	նրանց (նորանց)
Տ. Հ.	մեզ	ձեզ	նրանց (նորանց)
Բ.	մեզանից	ձեզանից	նրանցից (նորանցից)
Գ.	մեզանով	ձեզանով	նրանցով (նորանցով)
Ն.	մեզանում	ձեզանում	նրանցում (նորանցում)

Նրանք դերանունի տեղ երբեմն գործ է ածւում զրաբար ձևը՝ նոքա, նոցա, նոցանից և այլն։

§ 45. Իմ, քո, իւր դերանունները, երբ գոյականի հետ միասին են լինում, չեն փոփոխւում։—Իմ մատիտը, իմ մատիտի, իմ մատիտին, իմ մատիտից, իմ մատիտով, իմ մատիտները և այլն։

Իսկ երբ միայնակ են, ընդունում են ը որոշող յօդը և հոլովւում են գոյականների Ա. հոլովման պէս.

	Եզակի	Յոգնակի	
Ո.	իմը	իմերը	(իմոնք)
Ս.	իմի	իմերի	(իմոնց)
Տ.	իմին	իմերին	(իմոնց)
Հ.	իմը կամ իմին	իմերը կամ իմերին	(իմոնց)
Բ.	իմից (ը)	իմերից (ը)	(իմոնցից)
Գ.	իմով (ը)	իմերով (ը)	(իմոնցով)
Ն.	իմում (ը)	իմերում (ը)	(իմոնցում)

Այսպէս են հոլովւում և քոնը, նրանը, ձերը, մեզը, իրանը։

Իւր կամ իր դերանունը՝ ընդունելով որոշող յօդ, դառնում է իրանը։

§ 46. Ցուցական դերանունները սա, դա, նա գործ են ածւում մենակ և հոլովւում են նա անձնականի ձևով (§ 44)։

Այս, այդ, այն սովորաբար գործ են ածւում գոյականների հետ միասին և չ՚ունեն հոլովական վերջաւորութիւններ։

§ 47. Հարցական դերանունները ո՞վ, ի՞նչ հոլովւում են այսպէս.

Եզակի		Յոգնակի	
Ո. ո՞վ	ի՞նչ	ո՞վքեր	ինչե՞ր
Ս. ո՞ւմ	ինչի՞	չ՚ունի	ինչերի՞
Տ. ո՞ւմ	ինչի՞		ինչերի՞
Հ. ո՞ւմ	ի՞նչ		ինչե՞ր
Բ. ումնի՞ց	ինչի՞ց		ինչերի՞ց
Գ. ումնո՞վ	ինչո՞վ		ինչերո՞վ
Ն. ումնո՞ւմ	ինչո՞ւմ		ինչերո՞ւմ

Ով միշտ գործ է ածւում մենակ։

Ո՞ր դերանունը գոյականի հետ միասին չի փոփոխւում. իսկ երբ մենակ է, ընդունում է ը յոդը և հոլովւում է այսպէս.

Եզակի	Յոգնակի
Ո. ո՞ը	որո՞նք
Ս. որի՞	որո՞նց
Տ. որի՞ն	որո՞նց
Հ. ո՞ը կամ որի՞ն	որո՞նց
Բ. որի՞ց (ը)	որոնցի՞ց
Գ. որո՞վ (ը)	որոնցո՞վ
Ն. որո՞ւմ (ը)	որոնցո՞ւմ

Որ, երբ մենակ է, գործ է ածւում և առանց ը յոդի։

§ 48. Ցարաբերական դերանուններից որ հոլովւում է ո՞ր հարցականի պէս, միայն առանց հարցական նշանի։—Որ, որի, որին և այլն։

Իսկ ով որ, ինչ որ դերանուններից որ մնում է անփոփոխ. հոլովւում է միայն ով, ինչ։—Ով որ, ինչ որ, ում որ, ինչի որ, ումնից որ, ինչից որ և այլն։

§ 49. Որոշեալ դերանուններից իւրաքանչիւր, ամեն մէկ, ամեն, բոլոր, երբ գոյականի հետ են, չեն հոլովւում. իսկ երբ մենակ են, հոլովւում են գոյականների Ա. հոլովման ձևով։—Իւրաքանչիւր, իւրաքանչիւրի, իւրաքանչիւրից և այլն։

Իւրաքանչիւր և ամեն մէկ յոգնակի թիւ չ՚ունեն։

Ամեն, բոլոր, թէպէտ յոգնականի միտք ունեն, բայց հոլովւում են եզակի։

Եզակի	Յոգնակի
Ո. ինքը	իրանք
Ս. իւր (իր իրա)	իրանց
Տ. Հ. իրան	իրանց
Բ. իրանից	իրանցից
Գ. իրանով	իրանցով
Ն. իրանում	իրանցում

§ 50. Անորոշ դերանուններից ոչ ոք, ոչինչ գործ են ածւում մենակ և հոլովւում են միայն եզակի թիւում։—Ոչ ոք, ոչ ոքի, ոչ ոքից և այլն։

Ոմն եզակի թիւում չի հոլովւում, իսկ յոգնականում դառնում է ոմանք, ոմանց, ոմանցից և այլն։

Մի քանի բոլոր միւս հոլովներում ընդունում է ա մասնիկը։—Մի քանի, մի քանիսի, մի քանիսից և այլն։

§ 41. ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

1) Ես, դու, մենք, դուք դերանունների բացառական, գործիական և ներգոյական հոլովներից յաճախ դուրս է գցւում ա տառը։—Փոխանակ՝ ինձանով, քեզանով, մեզանից, ձեզանից և այլն. կարելի է գործածել՝ ինձնով, քեզնով, մեզնից, ձեզնից և այլն։

2) Սա, դա, նա, սրա, դրա, նրա, սորա, դորա, նորա գրւում են առանց յ տառի (12, գ, 2)։

3) Հարցական դերանուններից ո՞վ գրւում է ո-ով (§ 10, ա)։

Վարժութիւն։—Հետևեալ նախադասութիւններից ջոկեցէք դերանունները և որոշեցէք նրանց տեսակն ու հոլովը։

Ով որ փքանայ, շուտով չքանայ։ Ով չուստ, նա կուշտ։ էն առանց քեզ էլ կարող եմ ստանալ, ինձնից փրկութիւն դու բնաւ մի յուսալ։ Գժի համար ամէն օր կիրակի է։ Ամէն ծառ իր բարն ունի։ Ես տեսայ ձերոնց։ Լսել ես ձայն, չըգիտես՝ ուր է այն։ Գիրքս գնաց տարածւեցաւ մեր երկրում, ոմանց սիրտը վիրաւորւեց, ոմանց տուաւ նա լերկրում։ Մեզանից իւրաքանչիւրը պարտաւոր է սովորել իր մայրենի լեզուն։ Ես իմն ասացի, հիմա դուք գիտէք։ Ո՞ր մարդն է կոչւում բարի։ Բարի կոչւում է այն մարդը, որ լաւութիւն է անում ամենքին։ Ինչ որ կայ քո գրքում, այն էլ կայ և իմում։ Ոչ ոք չի ուզիլ, որ իր աչքը կոյր լինի։ Ուրիշին հոր փորողը ինքը մէջը կ'ընկնի։

ԹԻՎԱԿԱՆ ԱՆՈՒՆ

Ն. Մուրադեան

§ 52. Թւական անունները ցոյց են տալիս առարկաների քանակութիւնը կամ կարգը (դասը)։

Քանակութիւն ցոյց տուող թւականները կոչւում են քանակական (количественныя) և պատասխանում են քանի՞, ո՞րքան կամ ի՞նչքան հարցերին. իսկ կարգ ցոյց տուողները կոչւում են դասական (порядковыя) և պատասխանում են ո՞ր կամ ո՞ր-որորդ հարցերին։

Քանակական	Դասական
1. Մէկ, մի	Առաջին (մէկերորդ)
2. Երկու	Երկրորդ
3. Երեք	Երրորդ
4. Չորս	Չորրորդ
5. Հինգ	Հինգերորդ
6. Վեց	Վեցերորդ
7. Եօթը	Եօթներորդ
8. Ութ, ութը	Ութերորդ
9. Ինը	Իններորդ
10. Տասը	Տասներորդ
11. Տասնումէկ	Տասնումէկերորդ

12. Տասներկու	Տասնուերկուերորդ
20. Քսան	Քսաներորդ
21. Քսանումէկ	Քսանումէկերորդ
30. Երեսուն	Երեսուներորդ
40. Քառասուն	Քառասուներորդ
50. Յիսուն	Յիսուներորդ
60. Վաթսուն	Վաթսուներորդ
70. Եօթանասուն	Եօթանասուներորդ
80. Ութսուն	Ութսուներորդ
90. Իննսուն	Իննսուներորդ
100. Հարիւր	Հարիւրերորդ
101. Հարիւր մէկ	Հարիւրմէկերորդ
200. Երկու հարիւր	Երկուհարիւրերորդ
1000. Հազար	Հազարերորդ
1000000. Միլիոն	Միլիոներորդ։

Ինչպէս տեսնում ենք, քանակական թւականները, ընդունելով որորդ (երկ-որդ, եր-որդ, չոր-որդ) կամ երորդ (հինգերորդ, վեցերորդ) վերջաւորութիւնները, դառնում են դասական։

Բացառութիւն է կազմում առաջին բառը։

Քանակական թւականներին պատկանում են նաև մասնական թւականները՝ կէս, քառորդ, մէկ հինգերորդական, երեք տասներորդական կամ մէկ հինգերորդ, երեք տասներորդ և այլն։

Թւերի միաւորների կարգը ցոյց տուող թւականները վերջանում են աւոր։—Մի-աւոր, տասն-աւոր, հարիւր-աւոր, հազար-աւոր։

§ 53. Թւական անունները, երբ գոյականի հետ միասին են, չեն հոլովւում։—Հինգ աշակերտ, հինգ աշակերտի, հինգ աշակերտից և այլն։

Թւական անունները, երբ առանց գոյականի են, հոլովւում են գոյականների Ա. հոլովման ձևով։—Հինգ, հնգի, հնգից և այլն։ Հինգերորդ, հինգերորդի, հինգերորդից և այլն։

Ամսաթիւ, տարեթիւ և ժամ ցոյց տուող թւականները լինում են քանակական։—Զրօրհնէքը լինում է յունուարի վեցին։ Ստեփաննոս Նազարեանը մեռաւ հազար ութ հարիւր եօթանասուն եւ ինը թւին։ Դասերը վերջանում են ժամի երկուսին։

Այն թւականները, որոնք ցոյց են տալիս՝ թէ որևիցէ դէպք ո՞ր դարումն է կատարւել, լինում են դասական։ — Հինգերորդ դարում Ս. Մեսրոպ գտաւ հայոց տառերը։

§ 54. ԹԻԱԿԱՆՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

1) Թւական անուններից մէկ գրւում է է-ով։

2) Երկու հոլովւելիս՝ ընդունում է ս տառը—երկու-ս-ի, երկու-ս-ից, երկու-ս-ով, երկու-ս-ում։

3) Եօթը և ութը հոլովւելիս՝ կորցնում են ը տառը՝ եօթի, ութի, եօթից, ութից և այլն։

4) Տասը հոլովւելիս՝ ը տառը փոխւում է ն-ի՝ տաս-ն-ի, տաս-ն-ից և այլն. իսկ ինը կորցնում է ը տառը՝ ինի, իննից և այլն։

5) Երրորդ և չորրորդ թւականներում գրւում են երկու ր, իսկ միւս դասական թւականներում՝ մէկ ր։—

Հինգերորդ, վեցերորդ, տասներորդ, հարիւրերորդ և այլն։

6) Առաջին գրւում է ջ-ով, թէպէտ լսւում է չ։

Վարժութիւն։—Թւանշանով գրած թւականները գրեցէք տառերով.

5+5=10, 10—8=2, 50×5=250, 180: 9=20, $^1/_2$, $^3/_4$, $^1/_7$, $^1/_8$, $^1/_{10}$, $^7/_{100}$։

Պերճ Պռոշեանը ծնւել է 1837 թւին։ Հայր Ղևոնդ Ալիշանը մեռաւ 1901 թ. նոյեմբերի 21-ին։ Սմբատ Շահազիզը դեռ 10 տարեկան էր, երբ իր հայրենի Աշտարակ գիւղից գնաց Մոսկւա։

ԲԱՅ

§ 55. Առարկաների գործողութիւնը կամ դրութիւնը ցոյց տւող բառը կոչւում է բայ (глаголъ)։— Ուսուցիչը պատմում է (գործողութիւն)։ Աշակերտը նստած է (դրութիւն)։

ՍԵՌ

§ 56։ Բայերն ունեն երեք սեռ (залогъ)՝ ներգործական (дѣйствительный), կրաւորական (страдательный) և չէզոք (средній)։

Ներգործական բայը ցոյց է տալիս այնպիսի գործողութիւն, որ գլխաւոր առարկայից անցնում է երկրորդականին։—Կայէնը (գլխ. առ) սպանեց Աբէլին (երկր. առ.)։

Կրաւորական բայը ցոյց է տալիս այնպիսի գործողութիւն, որ մի առարկայ կրում է ուրիշ առարկայից։—Աբէլը սպան-ւ-եց Կայէնի ձեռքով։

Կրաւորական սեռը միշտ ծագում է ներգործականից, ընդունելով ւ (ու) մասնիկը։

Չէզոք բայը ցոյց է տալիս առարկայի դրութիւնը կամ այնպիսի գործողութիւն, որ մնում է

գործող առարկայի մէջ։—Երեխան քնած է։ Աշակերտը գնում է։

Վարժութիւն։—1. Հետևեալ նախադասութիւններից ջոկեցէք բայերը և որոշեցէք նրանց սեռը.

Դեկտեմբերին ձիւն է գալիս ու ծածկում սար ու ձոր։ Յունուարին դաշտը ծածկւում է սպիտակ սաւանով։ Ահա եկաւ նոր տարի, հետը բերաւ նոր բարի։ Հովիւն անուշ քնի մէջ խնդում է ու ծիծաղում։ Աղէքսը պառկեց աղբի տակին, աչքը գցեց չաղ հաւի ձագին։ Խելօք մանուկներ, շուտ հագնուեցէք, շուտով դասատուն դուք հաւաքուեցէք։

2. Հետևեալ նախադասութիւնները փոփոխեցէք այնպէս, որ ներգործական բայերը դառնան կրաւորական.

Ծնողները սիրում են իրանց որդիներին։ Մրջիւնը բերնով իր կերն է տանում։ Մեղուն ծաղկներից հիւթեր է ծծում։ Հնձողներն իրանց մանգաղն են շարժում։ Ձկնորսը ծովը ձգեց մեծ ուռկան, հանեց մարմինը սիրուն աղջկան։ Աշակերտը կը հասկանայ իր դասը։ Նա կարդում էր հայերէն գիրք։

3. Հետևեալ նախադասութիւնները փոփոխեցէք այնպէս, որ կրաւորական բայերը դառնան ներգործական.

Փայտը կտրւում է կացնով։ Մանուկները դասատուն հաւաքուեցին։ Արիւնը արիւնով չէ լւացւում։ Ծառն իր պտղից կը ճանաչւի։ Կուժը ջրի ճանապին կը կոտրւի։ Խաւարը փարատւում է լոյսից։ Բէլը սպանուեց Հայկի նետից։ Մայրը մխիթարւում է իր զաւակով։

Ե Ղ Ա Ն Ա Կ

§ 57. *Բայերն ունեն հինգ եղանակ* (наклоненіе)՝ *անորոշ* (неопредѣленное), *սահմանական* (изъявительтое), *հրամայական* (повелительное), *պայմանական* (условное) և *ստորադասական* (сослагательное)։

Անորոշ եղանակը բայի սկզբնական ձևն է և վերջանում է՝ *ել* (երգ-ել, աս-ել), *ալ* (ժպտ-ալ, կարդ-ալ), *անալ* (հասկ-անալ, իմ-անալ)։

Կան բայեր (գլխաւորապէս չէզոք), որոնք անորոշ եղանակում վերջանում են *իլ* (նստ-իլ, ապր-իլ), *յոգն-իլ*). բայց մեր այժմեան աշխարհաբար լեզուում այդ վերջաւորութեան տեղ գործ է ածւում *ել*։

Սահմանական եղանակը որոշ պատմում է՝ թէ ո՞վ և ե՞րբ է կատարում գործողութիւնը։—Սոխակը երգում է։ Աշակերտը կարդաց։ Ես կը գրեմ։

Հրամայական եղանակն արտայայտում է հրաման, խնդիր կամ խորհուրդ։—*Կարդա՛, ա՛յ իմ խելօք մանուկ։* Ծաս. *Գնա՛, որդեակ, աշխարհս անցի՛ր, պանծալի անուն մեծի դու ստացի՛ր։* Ռ. Պաս.

Պայմանական եղանակը ցոյց է տալիս այնպիսի գործողութիւն, որ կարող էր կատարւել, բայց մի որևիցէ պատճառով չի կատարւել։—*Կը կարդայի, եթէ ժամանակ ունենայի։ Ես դաշտ կ'երթայի, դաշտ Աւարայրի։*

Ստորադասական եղանակն արտայայտում է կասկած կամ ցանկութիւն գործողութեան կատարւելու մասին։—*Եթէ գնամ։ Որ տեսնէի։*

Վարժութիւն։—Հետևեալ նախադասութիւններից ջոկեցէք բայերը և որոշեցէք նրանց եղանակները.

Լսէ, իմ ծնող, լսէ, սիրական. հարազատ քոյրս խլեց

իմ փեսան։ Ռ.Պաս. Անձրև՛, անձրև՛, ցած արի, բացուր ցորեն ու գարի։ Ղ. Աղ. Թէ ես լինէի հարուստ մեծատուն, շատերի նման ես չէի լինիլ երբէք աղգասէր ունայն խօսքերով։ Ռ.Պաս. Իսկ երբորդ անգամ երբ ցանցը ձգեց, ով կարէ ասել՝ թէ ինչ դուրս հանեց։ Ծերն սկսեց կանչել ձկնիկին։ Պուշկ։

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ

§ 58. *Ժամանակը* (время) *երեք է՝ 1. Ներկայ* (настоящее), *2. Անցեալ* (прошедшее) *և 3. ապառնի* (будущее)։

1. Ներկայ ժամանակը ցոյց է տալիս այնպիսի գործողութիւն, որ կատարւում է այժմ։—Գրում եմ։

2. Անցեալ ժամանակը ցոյց է տալիս անցած գործողութիւն։ Անցեալը լինում է՝ սահմանական, պայմանական և ստորադասական։

Սահմանական անցեալը չորս է՝

ա) Անկատար (несовершеное)։—*Գրում էի։*

բ) Կատարեալ (совершенное)։—*Գրեցի։*

գ) Վաղակատար (предварительное прошедшее)։—*Գրել եմ, գրած եմ։*

դ) Դերակատար (давнопрошедшее)։—*Գրել էի, գրած էի։*

Պայմանական անցեալ (условное прошедшее)։—*Կը գրէի։*

Ստորադասական անցեալ (сослагательное прошедшее)։—*Եթէ գրէի, որ գրէի։*

3. Ապառնի ժամանակը ցոյց է տալիս այնպիսի գործողութիւն, որ պիտի կատարւի յետոյ։

Ապառնին լինում է՝

ա) Սահմանական։—Կը գրեմ, պիտի գրեմ։

բ) Ստորադասական։—Եթէ գրեմ, որ գրեմ։

Վարժութիւն։—*Հետևեալ նախադասութիւններից ջոկեցէք բայերը և որոշեցէք նրանց ժամանակները։*

Ծիտը ծառին ծլլում է, բաղէն գլխին պատում է։ Ձիւն էր գալիս փաթիլ-փաթիլ, հետո էլ անձրև կաթիլ-կաթիլ։ այդ միջոցին մի պառաւ կին հորթ էր փնտռում դաշտի միջին։ Արեգակը դուրս է եկել, շողը հերթից ներս է ընկել։ Կը գայ մայրդ, հետը շատ կը բերի քեզ անուշ կաթ։ Մանչը թելերը հատ ու բարակ, որ ես հոգամ իմ ցաւերը։ Ղ.Աղ. Մարգարիտը գնում է ուսումնարան։ Լևոնը գնաց տուն։ Ես տեսել եմ իմ ընկերոջ։ Նա տեսել էր իր վարժապետին։ Ուզում էի եղբօրս մի նամակ գրել, բայց ժամանակ չունէի։ Թէ տեսնես նորան, ինձնից բարևիր։ Կ'երթայինք, թէ կարողանայինք։

Դ Է Մ Ք

§ 59. *Բայերն ունեն երեք դէմք* (лицо)՝ *առաջին* (ես գրում եմ), *երկրորդ* (դու գրում ես) *և երրորդ* (նա գրում է)։

Թ Ի Ւ

§ 60. *Բայերն ունեն երկու թիւ՝ եզակի* (գրում եմ, գրում ես, գրում է) *յոգնակի* (գրում ենք, գրում էք, գրում են)։

ԴԵՐԲԱՅ

§ 61. Բայերից կազմւում են չորս տեսակ դերբայ (причастіе)՝ 1. անորոշ, 2. ներկայ, 3. անցեալ և 4. ապառնի։

1. Անորոշ դերբայը բայի սկզբնական ձևն է և ունի անորոշ եղանակի վերջաւորութիւնները՝ ել, ալ, անալ։

Անորոշ դերբայը հայոց լեզւում հոլովւում է գոյականների Բ. հոլովման պէս։—Գրել, գրելու, գրելուց, գրելով, գրելում։

Անորոշ դերբայը, ընդունելով իս վերջաւորութիւնը, ցոյց է տալիս ժամանակ։—Գրել-իս (այսինքն՝ գրելու ժամանակ)։

2. Ներկայ դերբայը վերջանում է ող։—Գր-ող։

Այս ձևը, իբրև բայից կազմւած ածական, գոյականի հետ վարւելիս՝ չի փոփոխւում։ Գրող աշակերտ, գրող աշակերտի, գրող աշակերտից, գրող աշակերտներ և այլն։

Իսկ երբ գործ է ածւում առանձին, հոլովւում է գոյականների Ա. հոլովման պէս։—Գրող, գրողի, գրողին, գրողներ և այլն։

3. Անցեալ դերբայը վերջանում է ած կամ ել։—Գր-ած, կարդաց-ել։

Անցեալ դերբայը գործ ածւելով եմ և էի բայի

հետ կազմում է վաղակատար (գրած եմ, գրել եմ) և գերակատար (գրած էի, գրել էի) ժամանակները։

Ած վերջացած դերբայները, գործ ածւելով կը լինէի, լինէի և լինեմ բայի հետ, կազմում են պայմանական և սռորադասական եղանակների բարդ ձևերը։—Գրած կը լինէի (պայման.)։ Եթէ գրած լինէի (սռորադաս.)։ Եթէ գրած լինեմ (սռորադաս.)։

Կը, որ, եթէ, թէ, եթէ որ, թէ որ դրւում են բայից առաջ։

Ած վերջացած դերբայը, իբրև ածական, գոյականի հետ վարւելիս՝ չի փոփոխւում. իսկ մենակ՝ հոլովւում է գոյականների Ա. հոլովման պէս։—Գրած, գրածի, գրածից, գրածով, գրածներ և այլն։

4. Ապառնի դերբայը վերջանում է ու։—Գրել-ու։

Ապառնի դերբայը գործ ածւելով էի և եմ բայի հետ, կազմում է հասատական անցեալ և ապառնի ժամանակներ։—Կարդալու էի։ Կարդալու եմ։

Ապառնի դերբայը, գործ ածւելով լինէի և լինեմ բայի հետ, կազմում է սռորադասական եղանակի անկատարը և ապառնին։—Գրելու լինէի։ Գրելու լինեմ։

Վարժութիւն։—1. Հետևեալ նախադասութիւններից ջոկեցէք դերբայները և որոշեցէք նրանց տեսակը։

Ամենայն ոք ցանկանում էր լինել նրան բարեկամ։Մ.Նալ. Գիր կարդալով դու գրքերում շատ նորանոր բան կ'իմանաս։ Կարդացողի խելքն է կտրուկ։ Ծաս. Նժոյգ ձի հեծած, պեխս ոլորած, ձեռս թուր առած՝ ես դաշտ կ'երթայի։ Ռ. Պաս. Աղօթարանը բացւեցաւ, ժամանակ է զարթնելու։ երթամ ախոռ, գոմշուկներս լծեմ՝ գութան վարելու։ Ց. Ցովհ.

2. Կազմեցէք դերբայներ հետևեալ բայերից։

Սովորել, նայել, կապել, կոտրել, զբօսնել, ննջել, խընդալ, ժպտալ, աղալ, հաճոյանալ, սարկանալ, զայրանալ, սլանալ, զլանալ, զարմանալ։

§ 62. ԲԱՅԻ ՁԵՒԵՐԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

գրում գրել գրած գրելու	եմ, ես, է, ենք, էք, են։ էի, էիր, էր, էինք, էիք, էին։
գր +	(կը, պիտի, եթէ, որ) եմ, ես, է, ենք, էք, են։ էի, էիր, էր, էինք, էիք, էին։ եցի, եցիր, եց, եցինք, եցիք, եցին։ իր, եցէք։ ող։ ելիս։

ԽՈՆԱՐՀՈՒՄ

§ 63. Բայի փոփոխումը եղանակներով, ժամանակներով և թիւերով կոչւում է *խոնարհում* (спряженіе)։

Բայերն ունեն երեք խոնարհում, որոնք որոշւում են անորոշ եղանակի վերջաւորութիւններով.

Ա. խոնարհում *ել*։—*Խօս-ել, երգ-ել*։

Բ. խոնարհում *ալ*։—*կարդ-ալ, խնդ-ալ*։

Գ. խոնարհում *անալ*։—*իմ-անալ, զարմ-անալ*։

ԵՄ ԵՎ ԼԻՆԵԼ ԲԱՅԵՐԸ

§ 64. *Եմ* և *լինել* բայերը կատարում են երկու

տեսակ պաշտօն՝ 1) կամ ցոյց են տալիս առարկայի էութիւնը կամ գոյութիւնը, 2) կամ օգնում են միւս բայերը խոնարհելու։ Առաջին դէպքում այդ բայերը կոչւում են էական (*ես եմ, դու կը լինես*), իսկ երկրորդ դէպքում՝ օժանդակ կամ օգնական (*գրում եմ, կարդացած կը լինես*)։

Եմ բայը պակասաւոր է, որովհետև ունի միայն երկու ժամանակ՝ սահմանականի ներկան և անկատարը.

ՆԵՐԿԱՅ

Եզակի	եմ,	ես,	է։
Յոգնակի	ենք,	էք,	են։

ԱՆՑԵԱԼ ԱՆԿԱՏԱՐ

Եզակի	էի,	էիր,	էր։
Յոգնակի	էինք,	էիք,	էին։

Եմ բայի պակաս ձևերը լրացնում է *լինել* պակասաւոր բայը. իսկ սրա պակաս ձևերը լրացնում է *եղանիմ* բայը։

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

ՆԵՐԿԱՅ

Լինում եմ, լինում ես, լինում է,
լինում ենք, լինում էք, լինում են։

Ա Ն Ց Ե Ա Լ Ա Ն Կ Ա Տ Ա Ր

Լինում էի, լինում էիր, լինում էր,
լինում էինք, լինում էիք, լինում էին։

Ա Ն Ց Ե Ա Լ Կ Ա Տ Ա Ր Ե Ա Լ

Եղայ, եղար, եղաւ,
եղանք, եղաք, եղան։

Վ Ա Ղ Ա Կ Ա Տ Ա Ր

Եղել եմ, եղել ես, եղել է,
եղել ենք, եղել էք, եղել են։

Գ Ե Ր Ա Կ Ա Տ Ա Ր

Եղել էի, եղել էիր, եղել էր,
եղել էինք, եղել էիք, եղել էին։

Ա Պ Ա Ռ Ն Ի

Կը, պիտի՝

լինեմ, լինես, լինի (է)
լինենք, լինէք, լինեն։

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Եղիր,
Եղէք։

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ա Ն Ց Ե Ա Լ

Կը, պիտի՝

Լինէի, լինէիր, լինէր,
լինէինք, լինէիք, լինէին։

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ա Ն Ց Ե Ա Լ

Եթէ, որ, եթէ (թէ) որ՝

Լինէի, լինէիր, լինէր,
լինէինք, լինէիք, լինէին։

Ա Պ Ա Ռ Ն Ի

Եթէ, որ, եթէ (թէ) որ՝

Լինեմ, լինես, լինի (է),
լինենք, լինէք, լինեն։

ԴԵՐԲԱՑ

Անորոշ՝ լինել։
Ներկայ՝ եղող։
Անցեալ՝ եղած, եղել։
Ապառնի՝ լինելու։

§ 66. Ա. ԽՈՆԱՐՀՈՒՄ

(Եվ)

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

ՆԵՐԿԱՅ

Խօս-ում եմ, խօս-ում ես, խօս-ում է,
խօս-ում ենք, խօս-ում էք, խօս-ում են։

ԱՆՑԵԱԼ ԱՆԿԱՏԱՐ

Խօս-ում էի, խօս ում էիր, խօս-ում էր,
խօս-ում էինք, խօս-ում էիք, խօս-ում էին։

ԱՆՑԵԱԼ ԿԱՏԱՐԵԱԼ

Խօս-եցի, խօս-եցիր, խօս-եց,
խօս-եցինք, խօս-եցիք խօս եցին։

ՎԱՂԱԿԱՏԱՐ

Խօս-ել եմ, խօս-ել ես, խօս-ել է,
խօս-ել ենք, խօս ել էք, խօս-ել են։

ԳԵՐԱԿԱՏԱՐ

Խօս-ել էի, խօս-ել էիր, խօս-ել էր,
խօս-ել էինք, խօս-ել էիք, խօս-ել էին։

ԱՊԱՌՆԻ

Կը, պիտի՝

Խօս-եմ, խօս-ես, խօս-ի (է)
խօս-ենք, խօս-էք խօս-են։

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Խօս իր,
խօս-եցէք։

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

ԱՆՑԵԱԼ

Կը, պիտի՝

Խօս-էի, խօս-էիր, խօս-էր,
խօս-էինք, խօս-էիք, խօս-էին։

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

ԱՆՑԵԱԼ

Եթէ, որ, եթէ (թէ) որ՝

Խօս-էի, խօս-էիր, խօս-էր,
խօս-էինք, խօս-էիք, խօս-էին։

ԱՊԱՌՆԻ

Եթէ, որ, եթէ (թէ) որ՝

Խօս-եմ, խօս-ես, խօս-ի (է)
խօս-ենք, խօս-էք, խօս-են։

Դ Ե Ր Բ Ա Յ

Անորոշ՝ խօ-սել։
Ներկայ՝ խօս ող։
Անցեալ՝ խօս-ած, խօս-ել։
Ապառնի՝ խօս-ելու։

§ 66. Բ. ԽՈՆԱՐՀՈՒՄ

(ալ)

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ն Ե Ր Կ Ա Յ

Կարդ-ում եմ, կարդ-ում ես, կարդ-ում է,
կարդ-ում ենք, կարդ-ում էք, կարդ-ում են։

Ա Ն Ց Ե Ա Լ Ա Ն Կ Ա Տ Ա Ր

Կարդ-ում էի, կարդ-ում էիր, կարդ-ում էր,
կարդ-ում էինք, կարդ-ում էիք, կարդ-ում էին։

Ա Ն Ց Ե Ա Լ Կ Ա Տ Ա Ր Ե Ա Լ

Կարդ-ացի, կարդ-ացիր, կարդ-աց,
կարդ-ացինք, կարդ-ացիք, կարդ-ացին։

Վ Ա Ղ Ա Կ Ա Տ Ա Ր

Կարդ-ացել եմ կարդ-ացել ես, կարդ-ացել է,
կարդ-ացել ենք, կարդ-ացել էք, կարդ-ացել են։

Գ Ե Ր Ա Կ Ա Տ Ա Ր

Կարդ-ացել էի, կարդ-ացել էիր, կարդ-ացել էր,
կարդ-ացել էինք, կարդ-ացել էիք, կարդ-ացել էին։

Ա Պ Ա Ռ Ն Ի

Կը, պիտի՝

Կարդ-ամ կարդ-աս, կարդ-այ,
կարդ-անք, կարդ-աք, կարդ-ան։

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Կարդ-ա՛,
կարդ-ացէք։

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ա Ն Ց Ե Ա Լ

Կը, պիտի՝

Կարդ-այի, կարդ-այիր, կարդ-ար,
կարդ-այինք, կարդ-այիք, կարդ-ային։

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ա Ն Ց Ե Ա Լ

Եթէ, որ, եթէ (թէ) որ՝

Կարդ-այի, կարդ-այիր, կարդ-ար,
կարդ-այինք, կարդ-այիք, կարդ-ային։

ՆԵՐԿԱՅ

Եթէ, որ, եթէ (թէ) որ՝

Կարդ-ամ,	կարդ-աս,	կարդ-այ,
կարդ-անք,	կարդ-աք,	կարդ-ան։

ԴԵՐԲԱՅ

Անորոշ՝ կարդ-ալ։
Ներկայ՝ կարդ-ացող։
Անցեալ՝ կարդ-ացած, կարդ-ացել։
Ապառնի՝ կարդ-ալու։

§ 67. Գ. ԽՈՆԱՐՀՈՒՄ

(անալ)

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

ՆԵՐԿԱՅ

Հասկ-անում եմ, հասկ-անում ես, հասկ-անում է,
հասկ-անում ենք, հասկ-անում էք, հասկ-անում են։

ԱՆՑԵԱԼ ԱՆԿԱՏԱՐ

Հասկ-անում էի, հասկ-անում էիր, հասկ-անում էր,
հասկ-անում էինք, հասկ-անում էիք, հասկ-անում էին։

ԱՆՑԵԱԼ ԿԱՏԱՐԵԱԼ

Հասկ-ացայ, հասկ-ացար, հասկ-ացաւ,
հասկ-ացանք, հասկ-ացաք, հասկ-ացան։

ՎԱՂԱԿԱՏԱՐ

Հասկ-ացել եմ, հասկ-ացել ես, հասկ-ացել է,
հասկ-ացել ենք, հասկ-ացել էք, հասկ-ացել են։

ԳԵՐԱԿԱՏԱՐ

Հասկ-ացել էի, հասկ-ացել էիր, հասկ-ացել էր,
հասկ-ացել էինք, հասկ-ացել էիք, հասկ-ացել էին։

ԱՊԱՌՆԻ

Կը, պիտի՝

Հասկ-անամ, հասկ-անաս, հասկ-անայ,
հասկ-անանք, հասկ-անաք, հասկ-անան։

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Հասկ-ացիր,
հասկ-ացէք։

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

ԱՆՑԵԱԼ

Կը, պիտի՝

Հասկ-անայի, հասկ-անայիր, հասկ-անար,
հասկ-անայինք, հասկ-անայիք, հասկ-անային։

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ա Ն Ց Ե Ա Լ

ԵԹԷ, որ, ԵԹԷ (ԹԷ) որ՝

Հասկ-անայի,	հասկ-անայիր,	հասկ-անար,
հասկ-անայինք,	հասկ-անայիք,	հասկ-անային։

Ա Պ Ա Ռ Ն Ի

ԵԹԷ, որ, ԵԹԷ (ԹԷ) որ՝

Հասկ-անամ	հասկ-անաս,	հասկ-անայ,
հասկ-անանք,	հասկ-անաք,	հասկ-անան։

ԴԵՐԲԱՅ

Անորոշ՝ հասկ-անալ
Ներկայ՝ հասկ-ացող։
Անցեալ՝ հասկ-ացած, հասկ-ացել։
Ապառնի՝ հասկ-անալու։

ԿՐԱՒՈՐԱԿԱՆ ԲԱՅԵՐ

§ 68. Բոլոր ներգործական բայերը, ընդունելով ւ (ու), դառնում են կրաւորական (§ 56) և խոնարհւում են ներգործական բայերի պէս։—Գրւում եմ, գրւում էի, գրւեցի, կը գրւեմ և այլն։

ԲԱՑԱՍԱԿԱՆ ԲԱՅԵՐ

§ 69. Ամեն մի բայ բացասական (отрицательный) դարձնելու համար սկզբից աւելացնում ենք չը կամ չ։—Չը խօսել. չեմ խօսում։

Բացասական բայի ձևերը կազմելու համար կարևոր է գիտենալ եմ պակասաւոր բայի բացասականը.

Ն Ե Ր Կ Ա Ց

Եզակի՝	չեմ,	չես,	չի (չէ)։
Յոգնակի՝	չենք,	չէք,	չեն։

Ա Ն Կ Ա Տ Ա Ր

Եզակի՝	չէի,	չէիր,	չէր։
Յոգնակի՝	չէինք,	չէիք,	չէին։

§ 70. Բացասական բայերը խոնարհւում են հետևեալ ձևով.

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ն Ե Ր Կ Ա Ց

Չեմ խօսում, չես խօսում, չի խօսում,
չենք խօսում, չէք խօսում, չեն խօսում։

Ա Ն Ց Ե Ա Լ Ա Ն Կ Ա Տ Ա Ր

Չէի խօսում, չէիր խօսում, չէր խօսում,
չէինք խօսում, չէիք խօսում, չէին խօսում։

Ա Ն Ց Ե Ա Լ Կ Ա Տ Ա Ր Ե Ա Լ

Զը խոսեցի, չը խոսեցիր, չը խոսեց,
չը խոսեցինք, չը խոսեցիք, չը խոսեցին։

Վ Ա Ղ Ա Կ Ա Տ Ա Ր

Զեմ խոսել, չես խոսել, չի խոսել,
չենք խոսել, չէք խոսել, չեն խոսել։

Գ Ե Ր Ա Կ Ա Տ Ա Ր

Զէի խոսել, չէիր խոսել, չէր խոսել,
չէինք խոսել, չէիք խոսել, չէին խոսել։

Ա Պ Ա Ռ Ն Ի

Զեմ խոս-իլ, չես խոս-իլ, չի խոս-իլ
չենք խոս-իլ, չէք խոս-իլ, չեն խոս-իլ։

Կամ՝

Պիտի չը խոսեմ, պիտի չը խոսես, պիտի չը խոսի,
պիտի չը խոսենք, պիտի չը խոսէք, պիտի չը խոսեն։

Կամ թէ՝

Զը պիտի խոսեմ, չը պիտի խոսես, չը պիտի խոսի...

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Մի՛ խոսիր (խոսիլ),
մի՛ խոսէք (մի՛ք խոսիլ)։

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ա Ն Ց Ե Ա Լ

Զէի խոս-իլ, չէիր խոս-իլ, չէր խոս-իլ,
չէինք խոս-իլ, չէիք խոս-իլ, չէին խոս-իլ։

Կամ՝

Պիտի չը խոսէի, պիտի չը խոսէիր, պիտի չը խոսէր,
պիտի չը խոսէինք, պիտի չը խոսէիք, պիտի չը խոսէին։

Կամ թէ՝

Զը պիտի խոսէի, չը պիտի խոսէիր, չը պիտի խոսէր...

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ա Ն Ց Ե Ա Լ

Եթէ, որ, եթէ (թէ) որ՝

Զը խոսէի, չը խոսէիր, չը խոսէր,
չը խոսէինք, չը խոսէիք, չը խոսէին։

Ա Պ Ա Ռ Ն Ի

Եթէ, որ, եթէ (թէ) որ՝

Զը խոսեմ, չը խոսես, չը խոսի,
չը խոսենք, չը խոսէք, չը խոսեն։

ԴԵՐԲԱՅ

Անորոշ՝ չը խօսել։
Ներկայ՝ չը խօսող։
Անցեալ՝ չը խօսած։
Ապառնի՝ չը խօսելու։

Վարժութիւն։—1 Հետեւեալ նախադասութիւններից ջոկեցէք բացասական բայերը և որոշեցէք նրանց ձեւերը.

Դու ծովը չը հասած, սգաւոր ես ինձ նման։ Էլ չը խօսեց Աբաքսը, յորձանք տուեց անագին։ Ռ. Պատ. Նա չը գիտէր՝ ինչ ասել է կարօտութիւն արծաթի. այժմ զրկւած ամեն բանից, չ՚ունի անդամ հացի գին։ Մ. Նալ.

2. Գրեցէք մի քանի նախադասութիւններ հետեւեալ բացասական բայերով.

Չ՚իմանալ, չ՚ասել, չը յուսալ, չը խնդալ, չը ճալ, չ՚աշխատել, չը տեսնել, չը վախենալ, չը զայրանալ, չ՚երգել, չը հաւաքել, չը լացուել, չը գրուել, չը նստել, չը պառկել։

ԴԵՐԲԱՅՆԵՐԻՑ ԿԱԶՄՒԱԾ ԲԱՂԱԴՐԵԱԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

§ 71. Ժամանակները դերբայներից կազմւում են եմ և լինել պակասաւոր բայերի օգնութեամբ։ Դերբայներից կազմւած ժամանակներն են՝

Վաղակատար

Խօսած (խօսել)
Կարդացած (կարդացել) } *եմ, ես, է, ենք, էք, են։*
Հասկացած (հասկացել)

Դերակատար

Խօսա (խօսել)
Կարդացած (կարդացել) } *էի, էիր, էր, էինք, էիք, էին։*
Հասկացած (հասկացել)

Ապառնի

Խօսելու
Կարդալու } *եմ, ես, է, ենք, էք, են։*
Հասկանալու

Անցեալ

Խօսելու
Կարդալու } *էի, էիր, էր, էինք, էիք, էին։*
Հասկանալու

Անցեալ-ապառնի

Խօսած
Կարդացած } *կը լինեմ, կը լինես, կը լինի և այլն։*
Հասկացած

Պայմանական անցեալ

Խօսած
Կարդացած } *կը լինէի, կը լինէիր և այլն։*
Հասկացած

Ստորադասական կատարեալ

Եթէ, որ՝

Խօսած
Կարդացած } *լինեմ, լինես, լինի և այլն։*
Հասկացած

Ստորադասական դերակատար

Եթէ, որ՝

Խօսած
Կարդացած } *լինէի, լինէիր, լինէր և այլն։*
Հասկացած

ԱՆՑՈՂԱԿԱՆ ԲԱՅԵՐ

§ 72. *Անցողական* (побудительный) կոչւում են այն բայերը, որոնք ցոյց են տալիս ուրիշին մի բան անել տալը։

Ներգործական և չէզոք բայերը կարելի է անցողական դարձնել, եթէ նրանց կատարեալ ժամանակում ց-ից յետոյ աւելացնենք նել (=անել)։—Կարդաց-նել, խօսեց-նել, նստեց-նել զարթեց-նել։

Իսկ նել և չել վերջացած բայերը, որոնք կատարեալ ժամանակում չ'ունեն ց, անցողական դառնալիս՝ ն և չ մասնիկների փոխարէն ընդունում են ցն։—

Մտնել—մտցնել, փախչել—փախցնել։

Մի քանի նել վերջացած բայեր դառնում են անցողական տալ բայի օգնութեամբ։—

Գտնել—գտնել տալ, տանել—տանել տալ։

Ներգործական բայը տալ բայի հետ միասին կարող է գործ ածել անցողականի տեղ։—Կարդալ տալ, գրել տալ։—Սոսկալի զէնքը բռնած մեր գլխին՝ կուլ տալ է տալիս արտասունք առատ։ Ռ. Պատ.

Իսկ եթէ տալ բայն աւելացնենք անցողական բային, կը ստանանք կրկին անցողական։—Կարդացնել տալ, խօսեցնել տալ։

Վարժութիւն։—Գրեցէք մի քանի նախադասութիւններ հետևեալ անցողական բայերով.

Նստեցնել, սովորեցնել, բարկացնել, հասկացնել, ապրեցնել, մացնել, հանգստացնել տալ, վախեցնել տալ։

ԱՆԴԷՄ ԲԱՅԵՐ

§ 74. *Անդէմ* (безличный) կոչւում են այն

բայերը, որոնք գործ են ածւում միայն եզակի երրորդ դէմքով։—Պէտք է, հարկ է, բաւական է, վայել է և այլն։

Կան չէզոք և կրաւորական բայեր, որոնք գործ են ածւում անդէմի մասքով։—Երևում է, թւում է, ցնում է, ասւում է, լսւում է, անձրևում է, մթնում է, լուսանում է և այլն։

ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԵՐ

§ 74. Այն բայերը, որոնք շեղւում են խոնարհումների ընդհանուր կանոնից, կոչւում են անկանոն (неправильный)։

Անկանոն են՝

1) Գալ բայը, որի կատարեալը, հրամայականը, ներկայ և անցեալ դերբայները կազմւում են ուրիշ արմատից։—

Կատ. Եկայ, եկար, եկաւ, եկանք, եկաք, եկան։

Հրամ. Ե՛կ (արի՛), եկէք։

Դերբ. Ներկայ՝ եկող։ Դերբ. անցեալ՝ եկել (եկած)։

2) Ուտել բայը, որի կատարեալը, հրամայականը և անցեալ դերբայը կազմւում են ուրիշ արմատից։—

Կատ. Կերայ, կերար, կերաւ, կերանք, կերաք, կերան։

Հրամ. Կեր, կերէք։

Դերբ. անցեալ՝ կերել (կերած)։

3) Լալ և տալ բայերը, որոնց սահմանականի ներկան և անկատարը՝ ում վերջաւորութեան փոխա-

ըէն՝ անորոշ դերբայի վրա ընդունում են իս։— Լալ-իս եմ, տալ-իս եմ։ Լալ-իս էի, տալ-իս էի։

Սահմանականի ներկայում և անկատարում նույն իս վերջաւորութիւնը ընդունում է և գալ բայը։— Գալ-իս եմ, գալ-իս էի։

4) Ունենալ և գիտենալ բայերը, որոնց սահմանականի ներկան և անկատարը գրաբարի ձևով է լինում։

Ներկայ	Ունիմ, ունիս, ունի, ունինք, ունիք, ունին։
	Գիտեմ, գիտես, գիտէ, գիտենք, գիտէք գիտեն։
Անկատ.	Ունէի, ունէիր, ունէր, ունէինք, ունէին, ունէին։
	Գիտէի, գիտէիր, գիտէր, գիտէինք, գիտէիք, գիտէին։

Ծանօթ.—Ունենալ ներկայում գործ է ածւում նաև՝ ունեմ, ունես, ունէ, ունենք, ունէք, ունեն։

5) Կամ պակասաւոր բայը, որ գործ է ածւում գրաբարի ձևով և ունի միայն սահմանականի ներկայ և անկատար ժամանակները։—

Ներկայ՝ կամ, կաս, կայ, կանք, կաք, կան։

Անկատ.՝ կայի, կայիր, կար, կայինք, կայիք, կային։

Ծանօթ։—Նել, նալ, չել վերջացած բայերը կատարելում, հրամայականում և անցեալ դերբայում կորցնում են ն և չ տառերը։—Գանել, գտայ, գտիր, գտած։

Դառնալ, դարձայ, դարձիր, դարձած։

Փախչել, փախայ, փախիր, փախած։

§ 75. ԲԱՅԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

1) Եմ բայի եզակի երրորդ և յոգնակի երկրորդ դէմքը ներկայում գրւում է է-ով։—Նա է, կարդում է։ Դուք էք, կարդում էք։

2) Եմ բայի անկատարի բոլոր ձևերը գրւում են է-ով։—Էի, էիր, էր, էինք, էիք, էին։

3) Անալ վերջացած բայերի անցեալ կատարեալի եզակի առաջին դէմքում լսւում է ցա, բայց գրւում է ցայ (հասկա-ցայ). իսկ երրորդ դէմքը վերջանում է ցաւ (հասկա-ցաւ) (§ 12—գ)։

4) Կը մասնիկը գրւում է բայից ջոկ և խառը։— Կը գրեմ, կըգրէի։

Իսկ երբ բայը ձայնաւոր տառով է սկսւում, կը մասնիկի ը տառը բաց է թողնւում և նրա տեղ դրւում է ապաթարց (՝) նշանը։—Կ՝ասեմ, կ՝երթայի։

5) Ել վերջացած բայերի սորադասական ապառնին իր վերջում ընդունում է եմ բայի ներկայի ձևերը (§ 64)։—(Որ, եթէ) գրեմ, գրես, գրէ (գրի), գրենք, գրէք, գրեն։

Իսկ սորադասական և պայմանական անկատարը ընդունում է նույն եմ բայի սահմանական անկատարի ձևերը։—(Որ, եթէ, կը, պիտի) գրէի, գրէիր, գրէր, գրէինք, գրէիք, գրէին։

6) Ալ և անալ վերջացած բայերի ապառնին եզակի երրորդ դէմքում վերջանում է այ։—(Կը, եթէ, որ) կարդայ, (Կը, եթէ, որ) հասկանայ։

7) Վերևի ուղղագրութեան հետ չը պէտք է շփոթել ալ վերջացած բայերի հրամայականը, որ եզա-

կիում վերջանում է ա շեշտով, առանց յ տառի։— Կարդա՛, գնա՛։

Հրամայականի յոգնակին բոլոր բայերի համար ընդունում է էջ վերջաւորութիւնը շեշտով։—Գրեցէ՛ք, կարդացէ՛ք, հասկացէ՛ք։

8) Ներկայ դերբայի ող վերջաւորութիւնը գրւում է ո-ով։—Գրող, կարդացող։

9) Զը մասնիկը գրւում է բայից ջոկ և և խառը։— Զը գրել, չը գրեցի։

Իսկ երբ բայը սկսւում է ձայնաւորով, չը մասնիկի ը տառը բաց է թողնւում և նրա տեղ դրւում է (՝)։—Զ՝ասել, չ՝ասացի։

10) Ներկայում և անկատարում չ մասնիկով եմ բայի հետ, գրւում է առանց (՝)։—Չեմ, չես, չէ (չի), չենք, չէք, չեն. չէի, չէիր, չէր, չէինք, չէիք, չէին։

11) Բաղադրեալ բայ կազմող բառերը գրւում են միմեանցից ջոկ։—Պար գալ, կուլ տալ, ձայն տալ, աչք ածել։

12) Բարդ բայ կազմող բառերը միանում են միմեանց հետ ա յօդակապով։—Պատաւասիրել, վարձատրել։

ՄԱԿԲԱՅ

§ 76. Առարկաների գործողութեան կամ դրութեան հանգամանքները ցոյց տւող բառերը կոչւում են մակբայ (нарѣчіе)։

Մակբայները լինում են՝

1) Տեղական՝ ուր, որտեղ, հեռու, մօտիկ, այստեղ, այնտեղ, վերև, ներքև, ներսը, դուրսը և այլն։

2) Ժամանակական՝ երբ, այժմ, յետոյ, այսօր, երէկ, վաղուց, երբեմն, երբէք, միշտ և այլն։

3) Որակական՝ ինչպէս, այսպէս, այդպէս, այնպէս, սաստիկ, սիրով, եղբայրաբար, հայերէն և այլն։

4) Քանակական՝ որչափ, ինչքան, այսքան, այդքան, այնքան, շատ, սակաւ, քիչ և այլն։

Շատ մակբայներ առաջ են գալիս՝ ա) գոյականներից, բ) ածականներից և գ) դերանուններից։

ա) Գոյականներից առաջ եկած մակբայները, եթէ տեղական են, կարող են հոլովւել Ս. հոլովման պէս։—Վերև, վերևի, վերևից, վերևով և այլն։

բ) Ածականները, բայի վրա դրւելով՝ դառնում են մակբայ։—Լաւ երգել, բարձր խօսել, խոր մտածել։

Որակական ածականներից առաջ եկած մակբայներն ունեն համեմատութեան աստիճաններ։—Լաւ երգել, աւելի լաւ երգել, ամենից լաւ երգել։

գ) Դերանուններից կազմւած մակբայները, ընդունելով պէս վերջաւորութիւնը, ունենում են գործիական հոլով։—Այսպէս—այսպիսով։

§ 77. ՄԱԿԲԱՅՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

1) Երէն Վերջաւորութեան մէջ ձայնաւորներից առաջինը լինում է ե, իսկ երկրորդը՝ է։—Հայերէն, ռուսերէն։

2) Պէս և օրէն վերջացած մակբայները գրւում են է-ով։—Վերջապէս, բարոյապէս, կուրօրէն։

3) Երբէք գրւում է է-ով։

Վարժութիւն։—1. Հետևեալ նախադասութիւններից ջոկեցէք մակբայները և որոշեցէք նրանց տեսակը.

Կոհունկ, ուսաֆ կուգաս, ծառայ եմ ձայնիդ։ Ժող. Կարկաջահոս աղբիւրն այնտեղ թաւալում էր մարգարիտ։ Նա յստակ էր, որպէս բիւրեղ։ Ս. Շահ. Աբէ, բարձրացիր հնութեան փոշուց, դու իմ հայ լեզու՝ մոռացւած վաղուց։ Ս. Նազ. Ո՞ւր էք վազում, զո՞ւր էք վազում, էյ սարսափած երէխներ։ Ցար. Թում. Մնացի մենակ, հոգիս վրդովւած։ Եւ այնուհետև ամեն իրիկուն ճնում եմ լուսնի խաղաղ ծագելուն։ Ռ. Պատ. Լաւ աշակերտը լաւ է սովորում։ Վատ մարդը Զատկին էլ վատ կը լինի։ Ժող. Մանիր թելեր հատ ու բարակ։ Ղ. Աղ. Ճըլը՛ ըզտ, ճըլը՛ ըզտ, ճախարակ, ես հատ մանեմ, դու բարակ. շատ մանողին շալ շապիկ, քիչ մանողին չիթի շապիկ։

Ցար. Թում.

2. Գրեցէք մի քանի նախադասութիւններ հետևեալ մակբայներով.

Գիշերը, ցերեկով, ամառը, միշտ, առաւօտը, մայիսին, վերև, ներքև, քաղցր, եղբայրաբար, այսքան, սակաւ, երբէք, բոլորովին, հայերէն, մանր-մանր, բարձր-բարձր, օրէցօր, էգուց։

ՆԱԽԴԻՐ ԵՒ ՅԵՏԱԴԻՐ

§ 78. Այն հոլովառու բառերը, որոնք ցոյց են տալիս առարկաների փոխադարձ յարաբերութիւնը, կոչւում են նախդիր (предлогъ) կամ յետադիր (послѣлогъ)։

Աշակերտը գնաց դէպի (նախդիր) տուն։

Հայրը գնեց որդու համար (յետադիր) մի գիրք։

Ինչպէս տեսնում ենք, նախդիրը դասւում է հոլովական բառից առաջ, իսկ յետադիրը՝ հոլովական բառից յետոյ։

Նախդիրներ՝ առանց, դէպի, մինչև, բացի...

Յետադիրներ՝ համար, հետ, մօտ, մէջ...

Գոյականներից առնւած յետադիրները հոլովւում են գոյականների Ա. հոլովման օրինակով։—

Մէջ, միջի, միջից, միջով, մէջերը և այլն։

Տակ, տակի, տակից, տակով, տակերը և այլն։

Վրայ, վրայի, վրայից, վրայով, վրաները և այլն։

Կան բառեր, որոնք կարող են լինել և յետադիր, և մակբայ։ Եթէ բառը գոյականի մօտ է դրւած, յետադիր է. իսկ եթէ բայի մօտ է՝ մակբայ է։

Սեղանի վրա (յետադիր) գիրք է դրւած։

Գիրքը դրեց վրան (մակբայ)։

§ 79 ՆԱԽԴԻՐՆԵՐԻ ԵՒ ՅԵՏԱԴԻՐՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

1) Մէջ գրւում է ջ-ով, թէպէտ լսւում է չ։ Հոլովւելիս՝ է տառը եզակիում դառնում է ի։—Միջի, միջից, միջով և այլն։

2) Վրայ կարելի է գրել և առանց յ-ի։

3) Ը-ը գրւում է ը-ով, բայց կարդացւում է իփրեւ։

4) Դէպի գրւում է է-ով

Վարժութիւն։—1. Հետեւեալ նախադասութիւններից ջոկեցէք նախդիրները և յետադիրները.

Դէպի ո՞ւր, ինձ ասա, թռչում ես այդպէս արագ։ Դոդ. Խոր ձորի մէջ գնում եմ ես. պարզ գիշեր է աստեղազարդ։ Գ. Բար. Մայրենի լեզու, մայրենի բարբառ, ախորժ, ընտանի իմ հոգու համար։ Ս. Նազ. Ճաշից յետոյ եղբայրը քրոջ հետ գնաց այգին։ Եղբայրս ծառի տակին, սաղմոսը կռան տակին։ Մինչև սեպտեմբեր վերջանում են ամառային արձակուրդները։ Բացի ամառային ամիսներից, մենք միշտ գնում ենք ուսումնարան։ Էն առանց քեզ էլ կարող եմ ստանալ, ինձնից փրկութիւն դու բնաւ մի յուսալ։ Տղայ, աղջիկ ուրախ, զարթ՝ փթըթեցան զերդ մայիսի վարդ։ Ռ. Պաս.

2. Կազմեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ լինեն հետեւեալ նախդիրները.

Դէմ, իբր, զատ, մօտ, ներքևը, փոխանակ, մինչև, դէպի, բացի, վերեր, առաջ (առջև), յետոյ, համար, տակ, վրա։

ՇԱԿՂԱՊ

§ 80. Նախադասութիւնները և նախադասութեան անդամները միմեանց հետ կապող բառերը կոչւում են շաղկապ (союзъ)։—

Ես գրում եմ, իսկ դու կարդում ես։

Գիրքը եւ մատիտը սեղանի վրա են։

Ամենագործածական շաղկապներն են՝ եւ (և) կամ ու, նաեւ, այլեւ, էլ, կամ (կամ թէ), եթէ (թէ), որ, թէեւ (թէպէտ), այլ, որպէս զի, քան (քան թէ) և այլն։

§ 81. ՇԱՂԿԱՊՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

1) Եւ կարող է գրւել և։

2) Ու շաղկապից առաջ բառի վերջում ը-ի տեղ գրւում է ն։—Հայրն ու որդին։

3) Թէ, թէեւ, թէպէտ գրւում են է-ով։

Վարժութիւն։—1. Հետեւեալ նախադասութիւններից ջոկեցէք շաղկապները.

Մարդ և անասուն, գազան և թռչուն, ամենքն էլ իրանց գործին են գնում։ Մերկ ու թուլակազմ եկար այս աշխարհ և մօրդ գրկում կ'առնէիր հանգիստ։ Բայց միայն, աւաղ, մահը տարաժամ տառապեալ մօրդ դրաւ գերեզման։ Դու տեսել ես երկնքումը պայծառ լուսին ծագելիս, կամ թէ կանաչ տերեւի մէջ կարմիր ծիրան փայլելիս։ Թէև դու բօրասայի ես զարդ, բայց քեզ տակաւին չեմ ասել մեծ մարդ։

2. Գրեցէք մի-մի նախադասութիւն հետեւեալ շաղկապներով.

Իսկ, բայց, ընդհակառակը, այնպէս—ինչպէս, այնքան—ինչքան, քան թէ, կամ, արդեօք, եթէ, միայն, թէև, ճիշտ, դիցուք, ինչքան, որ, որովհետև, որպէս զի, ուրեմն։

ՄԻՋԱՐԿՈՒԹԻՒՆ

§ 82. Այն հնչիւնները և բառերը, որոնք արտայայտում են մեր զգացմունքներն ու կրքերը, կոչւում են միջարկութիւն կամ ձայնարկութիւն (междометіе)։

Միջարկութիւններն արտայայտում են՝

1) Ուրախութիւն՝ ահ, ուհ, էֆ։
2) Ցաւ՝ վախ, վայ, օ, ոհ, ախ։
3) Ափսոսանք՝ ափսոս, աւաղ։
4) Բաղձանք՝ երանի թէ, ուր էր՝ թէ։
5) Զարմանք՝ վահ, օ, ոհ։
6) Երկիւղ՝ վայ թէ, մի գուցէ։
7) Կոչ՝ ով, ո, էյ, հէյ, ասօ, ձօ, այ։
8) Խրախոյս՝ կեցցէ, հա, ապրիս։

Կան նմանաձայն ձայնարկութիւններ, որոնք արտայայտում են անշունչ առարկաների և կենդանիների հնչիւնները։—Զը՛նգ, զը՛նգ. չը՛խկ, չը՛խկ. ճը՛ռ. մեաւ (կատու). համ-համ (շուն) և այլն։

§ 83. ՄԻՋԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

1) Միջարկութիւնների գլխին դրւում է երկար (՛) կամ շեշտ (՝)։—Ա՛խ, վայ, ասօ։

2) Միջարկութիւնը, եթէ դրւած է նախադասութեան սկզբում կամ վերջում, միւս անդամներից բաժանւում է ստորակէտով։ Իսկ եթէ նախադասութեան միջին է, երկու կողմից առնում է ստորակէտ։—

Ա՛խ, թռչո՛ւն, ծիծեռնակ, ծնած տեղս Աշտարակ։
Որքա՛ն դժբաղդ եմ ես, ա՛խ։
Հերոսը, աւա՛ղ, այլ ևս չկայ։

Վարժութիւն։—1. Հետևեալ նախադասութիւններից ջոկեցէք միջարկութիւնները.

Զայն տո՛ւր, ով ծովակ, ինչո՛ւ լռում ես։ Բաֆֆի։ Ես լսեցի մի անուշ ձայն, ախ, ափսո՛ս, որ երազ էր։Ս.Շահ. Ուխա՛յ, ուխա՛յ, սիրուն հովի՛ւ, քունդ անուշ։ Ղ. Աղ. Երանի՛, զարուն լինի տարին բոլոր ժամանակ։ Ժամը տւին—տա՛ն-դօ, տա՛ն-դօ. կովը կթենք, թը՛ռ, թը՛ռ կաթ տայ։Ց.Ց. Բաղէ, թը՛ռռ, բաղէ, թը՛ռռ... Պառաւ նանը զարթնում է, տա՛, տա՛, տա՛, պա՛, պա՛, պա՛։ Ղ. Աղ.

5։ Գրեցէք մի քանի նախադասութիւններ հետևեալ միջարկութիւններով.

Կեցցէ, ապրիս, վայ, մի գուցէ, էյ, այ, երանի՛, ասօ, օ, ծիւ-ծիւ։

ՅԱՒԵԼԻԱԾ

—

ՆԱԽԱԴԱՍՈՒԹԵԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

§ 1. ՀԱՄԱՌՕՏ ԵՒ ԸՆԴԱՐՁԱԿ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ։ *Համառօտ* (нераспространенное) *կոչւում է այն նախադասութիւնը, որի մէջ կան միմիայն գլխաւոր անդամներ։—Աշակերտը գրում է։*

Իսկ ընդարձակ (распространенное) *կոչւում է այն նախադասութիւնը, որի մէջ բացի գլխաւոր անդամներից՝ կան և երկրորդական անդամներ։—Աշխատասէր աշակերտը դասարանում գրում է իր դասը։*

§ 2. ԴԻՄԱՒՈՐ ԵՒ ԱՆԴԷՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ։ *Դիմաւոր* (личное) *կոչւում է այն նախադասութիւնը, որի մէջ ենթական յիշւում է կամ իմացւում է մտքով։—Աստուած ծուլութիւն չի սիրում երբէք։ Խելօք մանուկներ, (դուք) ձեր գրքերն առէք։*

Իսկ անդէմ (безличное) *կոչւում է այն նախադասութիւնը, որի մէջ ենթական անյայտ է։—Ասում են, որ ամենայն մարդ մի ասող ունի երկնքում։ Լուսացաւ, լուսացաւ, լուսն է բարին։ Ամպել է, ձիւն չի գալիս։*

§ 3. ՊԱՐԶ ԵՒ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ։ *Պարզ* (простое) *կոչւում է այն նախադասութիւնը, որ միայն մի պարզ միտք է արտայայտում։—Մրջիւնը բերնով իր կերն է տանում։*

Իսկ բարդ (сложное) *կոչւում է այն նախադասութիւնը, որ կազմւած է երկու կամ աւելի նախադասութիւններից։—Ինչ կը ցանես, այն կը հնձես։*

Բարդ նախադասութիւնը կազմւում է՝ գլխաւոր ու երկրորդական, միատրեալ, յաւելեալ եւ միջանկեալ նախադասութիւններից։

§ 4. ԳԼԽԱՒՈՐ ԵՒ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ։ *Գլխաւոր* (главное) *կոչւում է այն նախադասութիւնը, որից կախում ունի ուրիշ նախադասութիւն. իսկ երկրորդական* (придаточное) *կոչւում է այն նախադասութիւնը, որ կախում ունի գլխաւորից և պարզաբանում է նրա մի որևիցէ անդամը։—Մանի՛ր թելերը հաստ ու բարակ, որ ես հոգամ իմ ցաւերը։* Ղ. Աղ.

Այս օրինակում գլխաւոր նախադասութիւնն է Մանի՛ ըթելերը հաստ ու բարակ, իսկ երկրորդականը՝ որ ես հոգամ իմ ցաւերը։

Երկրորդական նախադասութիւնը գլխաւորապէս լինում է.

ա) Որոշիչ (опред.)։*—Այն գետը, որ անցնում է Թիֆլիսի միջով, կոչւում է Կուր։*

Եթէ այս բարդ նախադասութիւնը կրճատենք, երկրորդական որոշիչ նախադասութիւնը կը դառնայ որոշիչ բառ։—Թիֆլիսի միջով անցնող գետը կոչւում է Կուր։

բ) Լրացուցիչ (дополнит.)։*—Որդին լսում է, ինչ որ ասում են ծնողները։*

Եթէ այս բարդ նախադասութիւնը կրճատենք, երկրորդական լրացուցիչ նախադասութիւնը կը դառ-

նայ լրացուցիչ բառ։—Որդին լսում է ծնողների ասածը։

գ) Պարագայական (обстоят.)։—Որտեղ կայ սէր, այնտեղ կայ միաբանութիւն։ Ձիւնը հալւում է, հէնց որ տաքանում է եղանակը։ Ամեն մարդ աշխատում է, որ առաջ գնայ։

Եթէ այս բարդ նախադասութիւնները կրճատենք, երկրորդական պարագայական նախադասութիւնները կը դառնան պարագայական բառեր։—Սէր եղած տեղում կայ միաբանութիւն։ Ձիւնը հալւում է եղանակը տաքանալուն պէս։ Ամեն մարդ աշխատում է առաջ գնալու։

Ինչպէս տեսանք, երկրորդական նախադասութիւնը բաժանւում է գլխաւորից ստորակէտով. իսկ եթէ նա լինում է գլխաւոր նախադասութեան անդամների մէջ, երկու կողմից է ստորակէտ առնում։

Երկրորդական նախադասութիւնը գլխաւորից բաժանելու համար երբեմն դրւում է ըութ (՝) նշանը։—Պատմեց պառաւին՝ թէ ինչ բան տեսաւ։

Բութը, բացի դրանից, դրւում թւարկութիւնների, բացատրութիւնների ու բառերի զեղչման ժամանակ։—Տարին ունի չորս եղանակ՝ գարուն, ամառ, աշուն և ձմեռ։ Նա բերաւ իր հետ մի ոսկէ ձկնիկ՝ ձկանց արքայի դուստրը գեղեցիկ։ Մարտը տալիս է ճնծաղիկ. ապրիլը՝ կապոյտ մանուշակ։ Ղ. Աղ.

Բութը դրւում է նաև, երբ ուզում ենք չը շփոթել նախադասութեան զանազան անդամները միմեանց հետ։—Եւ նա ուժասպառ՝ խոտերի միջին՝ յուսահատ, տխուր լալիս էր անվերջ։ Ցար. Թում.

§ 5. ՄԻԱՒՈՐԵԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ։ Միաւորեալ (слитное) կոչւում է այն նախադասութիւնը, որը կազմւած է երկու կամ աւելի պարզ նախադասութիւնների միաւորութիւնից։—Արևն էլ վաղուց ելաւ, բարձրացաւ։

Այս նախադասութիւնը կազմւած է երկու պարզ նախադասութիւնների միաւորութիւնից՝ 1) Արևն էլ վաղուց ելաւ, 2) Արևն էլ վաղուց բարձրացաւ։

Միաւորեալ նախադասութեան մէջ մի ենթակայի հետ կարող են լինել երկու կամ աւելի ստորոգեալներ, մի ստորոգեալի հետ՝ երկու կամ աւելի ենթականեր, մի ենթակայի կամ ստորոգեալի հետ՝ երկու կամ աւելի միատեսակ երկրորդական անդամներ։—Ձի, ոչխար, գառնուկ, այծ, ուլ, հորթ ու կով գնացին իրանց գործին շտապով։ Արևը յաղթեց ամպերին, շողքը ձգեց սարերին։ Ղ. Աղ. Խեղճ որբիկը չ'ունի հայր, մայր, եղբայր ու քոյր։ Նա անտուն, անտէր, քաղցած ու ծարաւ թափառում է փողոցներում։ Դեկտեմբերին, յունուարին և փետրուարին ձմեռ է լինում։

Միաւորեալ նախադասութեան մէջ վերջին և նախավերջին միատեսակ անդամների մէջ դրւում է ու կամ և. իսկ միւս միատեսակ անդամները բաժանւում են իրարից ստորակէտով։

§ 6. ՅԱՒԵԼԵԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ։ Յաւելեալ (вносное) կոչւում է այն նախադասութիւնը, որ կազմւած է օտարի բառերից։—Մի օր տղեղն ասում է միւսին. «Երթանք ծովի ափ, քոյրիկ միասին»։ Ռ. Պատ.

Այս օրինակում Մի օր տղեղն ասում է միւսին գլխաւոր նախադասութիւն է, իսկ «Երթանք ծովի ափ, քոյրիկ միասին»՝ յաւելեալ։

Յաւելեալ նախադասութեան սկզբում դրւում է միջակէտ եւ չակերտ (. «), իսկ վերջում՝ չակերտ և վերջակէտ (» :)։

Հարց ու պատասխանների ժամանակ, չակերտների տեղ կարող է գործ ածւել անջատման գիծ (—), որ դրւում է յաւելեալ նախադասութեան առաջ, օրինակ.

—Էն մէկ հաւ կար. ո՞ւր գնաց։

—Ծարաւ աղբրում կուլ գնաց։

Ծանօթ.—Միջակէտը դրւում է նաև անկախ նախադասութիւնների մէջ։—Աշուն է խորին. ծիծառը թռաւ՝ անտառն է դատարկ. դաշտը մերկացաւ։

Չակերտների մէջ են առնւում նաև գրաւածքների և թերթերի անունները։—«Վէրք Հայաստանի» վէպը գրել է Խ. Աբովեանը։«Մեր Հայրենիքը» հայոց երգ է։«Բազմավէպը» հրատարակւում է սուրբ Ղազարի վանքում։

§ 7. ՄԻՋԱՆԿԵԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ։ Միջանկեալ (вводное) կոչւում է այն անկախ նախադասութիւնը, որ՝ իբրև ծանօթութիւն, գցւում է մի ուրիշ նախադասութեան մէջ։—Պետրոգրադը, ինչպէս յայտնի է, Ռուսաստանի մայրաքաղաքն է։ Եւ գնաց տեսաւ (բայց ի՞նչ տեսնի լաւ, որ արդար լինի եւ ոչ անիրաւ), հէն խուղի շէմքում պառաւը նստած։

Միջանկեալ նախադասութիւնը միւսներից բաժանւում է ստորակէտներով կամ փակագծով ()։

Վարժութիւն։—Վերլուծեցէք հետեւեալ նախադասութիւնները.

Աշունը եկաւ. թափւեցաւ սաղարթ։ Լռեց։ Ամպերը եկան, ծածկեցին։ Մեզնից շատ առաջ կար մի թագաւոր, հոգով դեռ արի, գլխով ալեոր։ Մօր համար բոլոր որդիքը սիրելի են։ Անձրեւում է։ Մթնում է։ Վարդը, մանուշակը և մեխակը անուշահոտ ծաղիկներ են։ Ահա մէկ օր էլ ծերը գնաց ծով, որ ձուկը որսայ իր մաշած ցանցով։ Սիրուն թիթեռ, ինձ ասա՝ թէ ինչով ես դու ապրում։ Այն աշակերտը, որ աշխատում է, արժանի է գովեստի։ Որտեղ հաց, այնտեղ կաց։ Այդ զարհուրելի ձայնից դաժան (ոչ որոտ-մունք էր և ոչ էլ գազան) լեռներ ու ձորեր դղրդում էին։ Կանչեց կիսամեռ սիրունը ջրից. «Քոյրիկ, իմ քոյրիկ, փրկէ ինձ մահից»։

§ 8. ՀԱՐՑԱԿԱՆ, ԲԱՑԱԿԱՆՉԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ։ Հարցական (вопросит.) կոչւում է այն նախադասութիւնը, որի մէջ կայ հարց։—Ինչո՞ւ ձկանց հետ պար չես բռնում մանկական։ Հիմի՞ էլ լռենք։

Հարց պարունակող բառի գլխին դրւում է հարցական նշան (՞)։

Բացականչական (восклицат.) կոչւում է այն նախադասութիւնը, որի մէջ կայ բացականչութիւն։—Օ՜, ծանր հոգսերի խղճուկ զաւակներ, որքան համբերող, քաջ է ձեր հոգին։ Ծաս։

Բացականչութիւն պարունակող բառի գլխին դրւում է երկար (՛)։

Պատմական (повѣствоват.) կոչւում է այն նախադասութիւնը, որի մէջ, առանց հարցի կամ բացականչութեան, հանդարտ պատմւում է մի բան։—Ձիւն էր գալիս փաթիլ-փաթիլ, հետն էլ անձրև կաթիլ-կաթիլ։ Ղ. Աղ.

ՀՍՍՌ-Արա ССР

ՑԱՆԿ

		Երես
1—3.	Հնչիւններ և տառեր	5
4.	Վանկ և բառ	7
7.	Բառերի կազմութիւնը	9
8—16.	Ուղղագրական գիտելիքներ	10
17.	Տողադարձի կանոնները	20
18—19	Նախադասութիւն	21
20.	Բանի մասեր	26
21—22.	Առարկայ և նրա տեսակները	27
23—34.	Գոյական անուն և նրա հոլովումները	28
35.	Անկանոն հոլովում	37
36.	Փոխող և կորչող գրեր	39
37.	Գոյականների ուղղագրութիւնը	40
38—40.	Ածական անուն և նրա փոփոխումները	41
41.	Ածականների ուղղագրութիւնը	43
42.	Դերանուն և նրա տեսակները	45
43.	Դերանուանական յօդեր	45
44—50.	Դերանունների հոլովումը	46
51.	Դերանունների ուղղագրութիւնը	50
52.	Թուական անուն և նրա տեսակները	51
53.	Թուականների փոփոխումները	53
54.	Թուականների ուղղագրութիւնը	54
55—60.	Բայ. սեռ, ժամանակ, դէմք, թիւ	55
61.	Դերբայ	60
62.	Բայի ձևերի կազմութիւնը	62
63—67.	Խոնարհում	62
68.	Կրաւորական բայեր	72
69—70.	Բացասական բայեր և նրանց խոնարհումը	73
71.	Դերբայներից կազմ. բազադր. ժամանակներ	76
72.	Անցողական բայեր	78
73—74.	Անդէմ և անկանոն բայեր	78
75.	Բայերի ուղղագրութիւնը	81
76.	Մակբայ և նրա ուղղագրութիւնը	83
78.	Նախդիր և յետադիր	85
79.	Նախդիրների և յետադիրների ուղղագրութ.	86
80.	Շաղկապ և նրա ուղղագրութիւնը	87
82.	Միջարկութիւն և նրա ուղղագրութիւնը	8
1—8.	Նախադասութիւնների տեսակները	90

2614
2013

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ.

Ցարուբիւն Թումանեանի

1) ԽՕԼԵՐ, վոդեվիլ 2-րդ տպագրութիւն . . . . . 20 կոп.
2) ԱՐԻՈՒԹԵԱՆ ԹԵՒԵՐԸ (թարգմ.) . . . . . 30 »
3) ԱՄՈՒՐԻՆ (ոտկատաթիւ) . . . . . 20 »
4) ՀԱՆԱՔ ՈՒ ԴԱՆԱԿ (ոտկատաթիւ) . . . . . 30 »
5) ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ (ոտկատաթիւ) . . . . 30 »
6) ՄԵԼԻՔ-ԲԵԳԼԱՐ, պատմ. պոէմ. (ոտկատաթիւ) 10 »
7) ՄԵԼԻՔ-ԻՍՈՒՓ » » . . . . . 20 »
8) ՄՈՒՍԱ, պատմ. պոէմ, I նստ. . . . . 20 »
9) ՄՈՒՍԱ, » » II » . . . . . 20 »
10) ՆԱՒԱՍԴՆԵՐ . . . . . 30 »
11) ՀԱՉԱՐԱՆ ԲԼԲՈՒԼ, ֆէէրիա 3 տպարաժով . . 30 »
12) ԱԲՏԱՒԱՆՉԻ Բ., պատմ. ֆէէրիա 4 պատկերով 30 »
13) ՈՒՂՂԱԳԻՐԱԿԱՆ ԱՂԻՍԱԿ . . . . . 3 »
14) ԴՈՒՍ-ՀԱՅԵՐԷՆ ԲԱՌԱՐԱՆ, 2-րդ տպագր. 1 ռ. 25 »
15) ՀԱՅ-ՌՈՒՍԵՐԷՆ ԲԱՌԱՐԱՆ . . . . . 1 » »
16) ՀԱՄԱՉԱՅՆՈՒԹԻՒՆ . . . . . 30 »
17) ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ, 5-րդ տպագրութիւն . . 40 »



Տիրոջ՝ Թիֆլիսի գրավաճառներին կամ հեղինակին՝
Тифлисъ, Ваке, собственный домъ А. И. Туманову.